Գ. ՏԱՐԻ Թիւ 623 ՈՒՐԲԱԹ 31 ՅՈՒՆՈՒԱՐ 1886 (Ն. Տ.) 12 ՓԵՏՐՈՒԱՐ 1886 7 ՃԷՄԱԶԻ ԻՒԼ ԷՎՎԷԼ 1303

40 ՓԱՐԱ.

—ՆԱՄԱԿ ԿԱՄ ՈՐ ԵՒ Է ԹՂԹԱԿՑՈՒԹԻՒՆ ՊԷՏՔ Է ՈՒՂՂԵԼ
ԱՌ ԽՄԲԱԳՐՈՒԹԻՒՆ
ԱՐԵՒԵԼՔ ՕՐԱԳՐԻ
Ղալաթիա, Նորատունկեան-խան

غلطه‌ده نورادونكيان خاننده آرەولك
غزته‌سی اداره‌سنه

Direction du journal AREVELK
Noradounghian Han, Galata
CONSTANTINOPLE

ԱՐԵՒԵԼՔ
ՕՐԱԳԻՐ
ՔԱՂԱՔԱԿԱՆ ԵՒ ԱԶԳԱՅԻՆ

40 ՓԱՐԱ.

ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹԻՒՆ

Կ. Պոլսոյ համար	Տարեկան	կանխիկ վճարմամբ	200
»	» Վեցամսեայ	»	100
»	» Եռամսեայ	»	50
Գաւառաց	» Տարեկան	»	240
Թղթատարով	Տարեկան	»	[illegible]
Գաւառաց համար եւ	[illegible]	»	[illegible]
Թղթատարով	վեցամսեայ	»	120
Օտար երկիրներ,	տարեկան	ֆրանք	56
»	» վեցամսեայ	»	28

Դուրս ղրկուած լրագրաց ծանուց. ծախքը Տնօրէնութեան վրայ է ։ Խմբագրութեան ղրկուած նամակ կամ գրութիւն ետ չ'տրուիր։

ԹՂԹԱԿՑՈՒԹԻՒՆՔ
« ԱՐԵՒԵԼՔ »Ի

ՊԵՏԵՐԲՈՒՐԳ, 3 Յունուար

Ահա՛ տասներորդ օրն է, որ Պետերբուրգը տօների պատճառաւ իւր կերպարանքը բոլորովին փոխել է։ Ամեն տեղ՝ տուն, փողոց, հասարակական զբօսարաններ, թատրոններ, կլուբներ և հիւրանոցներ, ուրախութիւն, զուարճութիւն, հրճուանք, հանդէսներ, զանազան երեւոյթներ են որ տեղի են ունենում։ Չնայելով մայրաքաղաքը որքան լայն ասպարէզ է բաց անում զանազան տեսակ ուրախութիւնների, զուարճութիւնների համար, սակայն տեղի ունեցող ուրախութիւններին, հանդէսներին աւելի փայլ ու շքեղ կերպարանք տալու նպատակաւ, մայրաքաղաքի արուարձաններն և չուրջը գտնուած մօտակայ ամառանոցների հասարակական հիմնարկութիւններն և այս տօներին մեծ բազմութիւն են գրաւում, գլխաւորապէս հարուստ, ազնուական դասակարգից։ Պետերբուրգից մօտակայ շրջակայքը գնալու և ուրախ ու զուարթ ժամանակ անցկացնելու համար, ի հարկէ ո՛չ առանց գեղեցիկ սեռի, անկասկած, երկաթուղով չեն գնում, այլ դորա համար առանձնապէս վարձում են երեք, չորս զոյգ ձիաներով մեծագին սահնակք (տրոյկա), հետները վեր առած զանազան խմելիքներ ու այդպիսով ուրախալից ձայներ ու կոչումներ հանելով ճանապարհ են ընկնում դէպի զանազան կողմեր։

Զուարճութիւններից ամենակենսականն Պետերբուրգի գլխաւորապէս միջին և բարձր դասակարգի երիտասարդ ու օրիորդների, փոքր մանչ ու աղջիկների համար սառոյցի վրայ սահելն է, չմշկելն, որը տեւում է ամբողջ օրը առաւօտեան ութ ժամից բռնած մինչ գիշերուայ 11-12 ժամը ելեքտրական լոյսի տակ. մանկտիի և երիտասարդների այս ձմեռային զուարճութիւնն միշտ իւր բազմաթիւ հանդիսականներն ունի. սոքա քաղաքի ջրանցքների երկաթեայ քանդակասիւններու վրայ յենուած, ուր սառոյցի վրայ չմշկում են անխտիր ամենքը, 15-25 կոպէկ մուտքի վարձ վճարում ամբողջ օրը և դատում ու դատափետում են այս ինչ այն ինչ կաքաւաշարժ չմշկողի-սահողի երիտասարդի կամ օրիորդի ճարպիկութիւնն։

Սառոյցի վտանգաւոր այս որոշ տարածութիւնն բոլորովին այլ կերպարանք է ընդունում կիւրակէ և այլ հանդիսաւոր օրերը։

Կէսօրեայ 12 ժամից սկսեալ երաժշտութիւնն արդէն բաց, պարզ օդի տակ դղրդեցնում է մարդուս երակները շարժող եղանակներով չմշկելու ցանկապատ տարածութիւնն. զոյգ զոյգ օրիորդներ, աղջիկունք, երիտասարդ ու մանչեր ահա կեցած են այդ տեղ։ Երաժիշտները ածում են Գատրիլը և այլ պարերգութեան եղանակները։ Այդ միջոցին մի կողմում օրիորդ ու երիտասարդ թեւ թեւի տըւած կամ առաջինն երկրորդի կռանն յենուած, միւս հակառակ կողմում հինգ վեց հոգուց բաղկացած օրիորդներ, երիտասարդներ ձեռք ձեռքի տուած խիստ մեծ արագութեամբ ու ճարպիկութեամբ պարում ու կաքաւաշարժ պտոյտներ են անում սառոյցի վրայ։ Երաժշտութեան ազդեցութեան տակ ոգեւորուելով, շատերը մինչ այն աստիճան խիստ ճարպիկ ու շնորհալի շարժումներու յանկարծակի պտոյտներ են անում, անշուշտ ամեն մէկը ջանալով միւսից գերազանցել, որ մարմնամարզութեան մէջ յայտնի կրկէսներում հազիւ թէ դրանց հաւասարը գտնուի։

Հարթ, տափակ սառոյցի վրայ չմշկելը վերջապէս ձանձրացնում է չըմշկող հասարակութիւնն։ Այդ միջոցին խումբ խումբ դիմում են այսպէս ասուած սառցային բլուրները, լեռները, նայելով ինչ բարձրութեամբ են նոքա պատրաստուած։ Սառցային բլուրներ անուանւում են մի քանի կանգուններից բաղկացած գմբէթաւոր տախտակեայ շինութիւն, որը փոքր առ փոքր ցածրանալով մի երկու տասնեակ կանգունների երկարութեամբ հաւասարւում է գետնի հետ։ Ամենաբարձր գագաթից սկսեալ մինչ գետնի հետ հաւասարուելն և բաւականին էլ դեռ հեռու՝ այդ բոլոր տարածութիւնն ծածկուած է հաստ կտոր սառոյցներով, որոնք անկասկած միմեանց խիստ կից լինելով մի հարթ դարուվայր են կազմում։ Չմշկող հասարակութիւնն սանդուխներով բարձրանալով, այդ բարձրութիւնից յանկարծ կայծակի արագութեամբ գլխիվայր սկսում է սահել դէպի ցած. այդպէս մէկը միւսի յետեւից կամ զոյգ զոյգ սահելով, բաւականին մեծ զուարճութիւն են պատճառում թէ իրանց և թէ հանդիսատես հասարակութեան։ Անշուշտ մեծ ճարպիկութիւն է հարկաւոր սառցային բլրից չմշկելու համար, թէ չէ հակառակ դէպքում շատ հեշտութեամբ կարելի է փշրուել։ Սառցային լեռները իրանց բարձրութեամբ ու գեղազանցութեամբ քաղաքի շրջակայքներումն են գտնվում և չմշկողների մէջ կին մարդ առհասարակ շատ քիչ է պատահում տեսնել, եթէ միայն չասել բոլորովին։

Փոքրիկ երեխայոց համար՝ հօթ ութ տարեկանից սկսած մինչ 12-14 եւս՝ զուարճութիւնների մեծ ասպարէզ է տեղի ունենում այս տօն եւ հանդիսաւոր օրերը. բացի երեխայից ծնողներից, որոնք բաւականին մեծ երեկոյթներ են կազմում սոսկ երեխայոց համար հանդերձ երաժշտութիւնով, կան և զանազան բարեգործական և մանկավարժական ընկերութիւններ, որք մէկ միւսի հետեւից պարերգութեան, թատրոնական, երաժշտական և այլն երեկոյթներ են տալիս ու բազմատեսակ հանդէսներ կազմում առաւօտուն ժամի 10ից մինչ գիշերուայ 11 ժամը։ Այս վերջին կարգի հանդէսները յոյժ մեծ յարմարութիւն ունին, և բաւականին գրաւիչ ծրագիր երեխաների համար։ Երեւակայեցէք ձեզ մի ահագին կամարաձեւ դահլիճ, ուր առ հասարակ ամբողջ տարուայ ընթացքում ձիավարժութիւն է տեղի ունենում։ Արդէն այս երեւոյթը ինքնին երաշխաւորում է դահլիճի յոյժ ընդարձակ մեծութիւնն։ Բազմատեսակ ծառերից, ծաղիկներից, մարմարեայ քանդակագործութիւններից նեղ և երկայն ծառուղիներ են կազմած. դահլիճի կողմերը արուեստական բլուրներ ու դաշտավայրեր շինուած են. դահլիճի մէջ տեղում, զանազան անկիւններում, քաղցրաւենիք, սուրճ, թէյ և այլ խմելիքներ են ծախւում. երաժշտութիւնն շարունակ զանազան եղանակներ է ածում. երբեմն դա ընդհատւում է ասիական զուռնային տեղի տալով, որի եղանակի տակ «Կովկասու հրաշք» Աբդուլ Քերիմը մեծ բարձր սիւների վրայ կապած, ամրացած հաստ պարանի վրայ այլ և այլ մարմնամարզութիւններ են անում, որքան կարելի միայն ճարպիկ ու շնորհալի կերպիւ, որի համար իսկ «Կովկասու հրաշք» պատուաւոր անունն է ստացել. դահլիճի մի այլ անկիւնում մէկ գործողութիւնից փոքրիկ կոմեդիաներ և վոդվիլներ են տեղի ունենում. միւս կողմում ռուս բանաստեղծների հեղինակութիւններից «կենդանի պատկերներ» են ցոյց տալիս բենգալեան լոյսի տակ, վերջապէս շատ այլ և այլ զուարճութիւններ, որոց ամեն մի քայլում հանդիպում ես չուրջ։ Մուտքը մինչ վեց ժամը երեկոյեան արժէ 30 կոպէկ, իսկ 6ից մինչ 11ը, երբ ամբողջ դահլիճը գոյնզգոյն լապտերներով, ելեքտրական լոյսով է լուսաւորած, 50 կոպէկ.

Իսկ ինչ վերաբերում է Պետերբուրգի ընդհանուր ուսանողութեան, պէտք է ասած, որ սոքա եւս զանազան ազգութիւնների, կուսակցութիւնների, խմբերի բաժանուած, ունին իրանց փառաւոր երեկոյթները։ Այս երեկոյթները մինչ այն աստիճան բազմատեսակ և բազմաթիւ են, որ խիստ դժուար է լինում հանդէսէն դուրս դոցա վերայ տեղեկութիւն առնել։ Ուսանողուհիների երեկոյթները ըստ դէպքին աւելի ուրախ և խաղաղ են անցնում։ Անշուշտ տեղւոյս հայ ուսանողութիւնն եւս ունի իւր երեկոյթը, որը այս տարի շատ ուրախ անցաւ, բայց սորա մասին առանձին, փոքր ինչ ներքեւումը կը պատմենք։

Մայրաքաղաքի այս ընդհանուր ուրախութեան և հրճուանքի հետ միասին, ազնիւ ընթերցող, անշուշտ չես մոռանալ ենթադրել, որ կան և բաւականին թուով թշուառ անհատներ ու ընտանիքներ, որոնց օրը, երբեք սխալուած չենք լինիլ, եթէ ասենք, ցաւ ու կսկիծ, լաց ու կոծ է համարեա։ Ըստ որում ամենակենսական պաշարէնն իսկ հայթայթելուց զուրկ լինողների թիւը, ոչ պակաս զարհուրանք է ազդում մարդուս. կան խեղճեր, թշուառներ, որոնք օգնութիւն խնդրել կեանքի ներկայ պայմանների մէջ, անկարող են. կան ու այնպիսիք որոնք գտած չէին օգնութիւնմն էլ նոյն թշուառներն են, ինչ ստանալուց առաջ։ Բացի տեղական չքաւորներից, բաւականին ստուար թիւ են կազմում և նորեկաւորներ, որոնք սոսկ մուրացկանութեամբ են ապրում։ Չնայելով քաղաքապետի կարգադրութիւններին, այս վերջին կարգ չքաւորները վերադարձնել մայրաքաղաքից իւրեանց բնակավայրերը, այնու ամենայնիւ սոքա էլ մի ինչ հնարքներով առիթ են գտնում առժամանակ փախուստ տալ կառավարութեան աչքից և այդպիսով աւելի բարւոք են համարում մուրացկանութեամբ այստեղ ապրել, քան վերադառնալ իրենց գիւղեր ու քաղաքները։ Ամեն շաբաթ քաղաքապետութիւնն այնուամենայնիւ յաջողում է մօտ հազար հոգի դուրս ղրկել Պետերբուրգից։

Քաղաքի թշուառներին այս տօն ու հանդիսաւոր օրերը կերակրելու համար, Պետերբուրգի մի քանի մասերում, ուր առհասարակ աւելի աչքի է ընկնում չքաւոր դասակարգը, բացուած կան հասարակաց ձրի ճաշարաններ, ուր դոքա ամեն օր պատրաստի տաք կերակուրից երկու տեսակ ճաշ ունին։ Յաճախ պատահում է, որ այս ձրի ճաշարաններում ճաշում են և այնպիսիք, որոնց արտաքին տեսքը, հագուստը ձեզ բոլորովին զարմացնում է։

Բացի այս ճաշարաններից կան բացուած և սոսկ հացատներ, ուր ամեն մի չքաւոր դիմելով, մի մեծ կտոր հաց է ընդունում ձրի ու հեռանում։ Այս կերպ հիմնարկութիւններն, անշուշտ, վատ չէր լինի եթէ բացուէին և մեր հայրենակ մեծ քաղաքներում, ուր տընանկների գոյութիւնը ու բազմութիւնն ակներեւ է։

Տեղւոյս հայ հասարակութիւնն եւս, որպէս մայրաքաղաքի բնակիչների ամբողջութեան մի մասն կազմելով, թէև յոյժ աննշան, բնականաբար չէ կարող ժամանակից չլինել մարդկութեան այս ընդհանուր հօսանքին։ Որովհետեւ մայրաքաղաքի հայ հասարակութիւնն գլխաւորապէս վաճառականներից եւ փոքր ինչ էլ յայտնի պաշտօն վարող աստիճանաւորներից է բաղկացած, ուստի սոցա մէջ չպէտք է փնտռել մեր չքաւոր դասակարգը, այլ դոցանից դուրս առանձին ընտանիքների, գլխաւորապէս ուսանողութեան մէջ։ Մօտ տասն հոգի հայ անանկներ արդէն կերակրվում, հոգացվում են տեղւոյս եկեղեցական կալուածքից։ Սոքա գլխաւորապէս կին մարդիկ, տարին տասներկու ամիս ապրում են եկեղեցու գերեզմանատան շինութիւնների մէջ և այդ բնակավայրից համարեա թէ բնաւ սոքա չեն դուրս գնում։

Հայ ուսանողութիւնն որպէս մի ամբողջ մարմին, ունի իւր առողջ և հիւանդ կողմերը, հարուստ և չքաւոր դասակարգը։ Թերեւս մի այլ անգամ մեզ յաջողուի ծանօթացնել յարգելի տաճկահայ ընթերցողներին հայ ազգի մի նշանաւոր մասի այս նոր, մօտ ապագայում դեր խաղացող հայութեան կեանքում, մասաւոր տարրի հետ, որը իւր շատ հետաքրքիր և այլ և այլ մասամբ հիւանդ կողմերը ունի։ Պետերբուրգի հայ ուսանողների թիւը հարիւրէն աւելի է, որոնց թվումն են 8-10 հայուհիք։ Սոցա միայն մի հինգերորդ մասն է ապահովուած այնքան որ ազատ կարող է նուիրել ինքզինքը իւր մասնագիտութեան. մինչեւ մօտ երեք հինգերորդական մասը ստանում են իրանց ծնողներից այնքան, որ խիստ տնտեսութեամբ հազիւ հազ կարողանում են մի կերպ ապրել, իսկ մնացեալ 20—30 ուսանողները բաղդի ճակատագրի քմահաճոյքին են միայն ապրում, եթէ այսպէս կարելի է ասել, ըստ որում տանից, ծնողներից ոչ մի կոպէկ չստանալով, դոքա դեռ իւրեանց երիտասարդական առաջին տարիներում, ստիպուած են տանել կեանքի այն անտանելի թշուառութիւնն, որը միանգամայն դէպի հողն է կործում առողջ կազմուածք ունեցող երիտասարդ մարդուն։ Մենք այստեղ փոքր ինչ մեզ իրաւունք ենք տալիս չքաւոր դասակարգի ուսանողների վրայ մի երկու խօսք ասել, քանի որ այդ բանին մեզ ստիպում է մի յոյժ զգալի կորուստ, որը ունեցաւ այս վերջերս հայ ուսանողութիւնը։ Դեկտեմբերի 22ին կիւրակէ կէսօրեայ 12—2 ժամում կայսերական հիւանդանոցում իւր երկու ընկերակիցների առաջ, հիւսիսի այս անհիւրընկալ սառնամանիքում, ի խոր ցաւ իւր ծնողների, ընկերների և հայութեան, կնքեց քսան հինգ տարեկան հասակում Ղարաբաղու Ջրաբերդ գիւղի ակունքներով ու դժվարար օդով սնուած ու աշխոյժ կեանք առած հայ պատանին՝ Պօղոս Տէր Աստուածատրեանցը. Հանգուցեալը անակընկալ մահուան դոյժը, յուսահատեցրեց իւր ընկերներին։ Աւելի եւս տպաւորութիւնն խոր ու թափանցիկ էր, քանի որ շատերը իւր ընկերներից մտադրվում էին տեսութեան գնալ մի երկու երեք օրէն, ի նկատի առնելով նորա առ երես թեթեւ հիւանդութեան լուրը։ Հանգուցեալը միայն վեց օր պառկած մնաց հիւանդանոցում։ Չնայելով որ նորան դարմանում էր Պրոֆէսսոր Մանասէյնը, այնու ամենայնիւ հանգուցեալը կնքեց իւր կեանքը։ Դորա մահուան միակ եւ եթ պատճառք — չքաւորութիւն և դորանից յառաջ եկող թոքային և նեարդի հիւանդութիւնն էր։ Անակնկալ մահը նեարդի մէկի պատռելուցն առաջ եկաւ. Թշուառ Պօղոս Տէր Աստուածատրեանը նոյն այս վիճակում, ինչպէս ասաց Պրոֆէսսորը, կարող էր ապրել դեռ մի քանի տարիներ, եթէ միայն շուտով Կովկաս վերադառնար։ Թողված ընկերակիցներին ահա ինչ ասաց յարգելի Պրոֆէսսորը. «Պարոններ, եթէ սա՛ իմ որդին լինէր այս դրութեան մէջ մի րոպէ անգամ չէի թողնիլ Պետերբուրգում։ Լսեցէք ինձ. քանի որ ձեզանից շատերը որպէս հարկն է չէք կերակրվում, ուստի վերջապէս խորհուրդ եմ տալիս գէթ ծըծեցէք, շնչեցէք մաքուր օդ»։ Հանգուցեալը սովորութիւն ունէր ծխախոտ ծխելու, որի ծուխը իւր սենեակի օդը անկասկած փչացնում էր, և ահա այդ իսկ միջոցաւ օդը, հանդերձ ծխախոտով, անակնկալ կերպիւ վերջ տուեց նորա կեանքին։ Ուսանողների մի ինչ մոռացկոտութիւնից կամ շատերի անտեղեակ լինելուց հանգուցեալու հիւանդութեան ու փոխադրութեանն ի հիւանդանոց, մեռնելու նախընթաց օրը ոչ ոք չի գնում տեսութեան թշուառ Պօղոսին։ Այդ օրը, շաբաթ, ողորմութեան քոյրը, հիւանդի մօտ գտնուող խնամող կինն, տեսնելով հանգուցեալոյ մահամերձ վիճակը առաջարկում է հաղորդութիւն ընդունելու։ Երբ տարաբաղդ հայ ուսանողը իւր այդ վիճակում լսում է որ հաղորդութիւն տուողը օրտօտօքս-ռուս քահանայ պէտք է լինի, հրաժարվում է այդ առաջարկութիւնից ու խնդրում ողորմութեան քոյրից իմացնել «մեր տղերանցը, նոքա հայ քահանայ կը հրաւիրեն»։ Իսկ ողորմութեան քոյրը, Աստուած միայն ողորմութեան քոյր համարի, անտես առնելով հանգուցեալի խնդիրքը, լռում է և երբ հետեւեալ կիւրակէ օրը երկու ընկերներ պատահաբար զինի տեսութեան են գնում, արդէն բանն վերջացած է լինում և մի ժամէն զինի առանց Ս. հաղորդութեան մի երկու երեք խօսք արտասանելով և «ա՛խ, ինչ լաւ կը լինէր մեռնէի» ասելով աւանդում է իւր հոգին, ազակից ընկերներին թողնելով լաց ու կոծի մէջ։ Տօների պատճառաւ թաղումը տեղի ունեցաւ դեկտ. 26, հինգշաբթի, Ս. Պօղոս Պետրոսի տօն օրը։ Ս. Պատարա-

---

—)(31)(—

ԹԵՐԹՕՆ ԱՐԵՒԵԼՔԻ

ԺԻՒԼ ՎԵՐՆ

ՄԱԹԻԱՍ ՍԱՆՏՈՐՖ

ՄԱՍՆ ԱՌԱՋԻՆ

Ը.

ԱՆՏՐԷԱ ՖԷՐՐԱԹՈՅ ՁԿՆՈՐՍԻՆ ՏՈՒՆԸ

Միայն նաւ նստելու ժամանակ զգուշութիւնք պէտք էին։ Բայց գիշերն աղջամղջին պիտի լինէր, առանց լուսնի, և յոյժ հաւանաբար, երեկոյեն թանձր մշուշ մը պիտի ելնէր, որ ծովեզրը կը ծածկէր՝ առանց մինչեւ ծովուն բացերը ծաւալելու։ Այն ժամուն ծովեզրին վրայ ալ ոչ ոք կրնար գտնուիլ բացի քանի մը մաքսադէտերէ։ Իսկ Անտրէա Ֆէրրաթոյի դրացի ձկնորսք, ինչպէս որ ըսած էին, իրենց ուռկանները պարզելու պիտի զբաղէին ծովեզերեայ ժայռերէն դուրս, այսինքն Ռովինեոյէն երկու կամ երեք մղոն վար։ Երբոր Անտրէա Ֆէրրաթոյի նաւը տեսնէին, եթէ կարենային տեսնել, արդէն բաւական հեռացած պիտի լինէր ծովուն մէջ՝ երկու փախստեայներուն հետ, որք նաւուն կիսայարկ տախտակամածին տակ պիտի թաքչէին։

—Ո՞րչափ է Ռովինեոյի ուղղակի հեռաւորութիւնն իտալական ծովեզրին ամենէն մօտակայ կէտէն, հարցուց Ստեփան Պաթորի։

—Յիսուն մղոնի չափ։

—Ո՞րչափ ժամանակ պէտք է անցնելու համար։

—Այս հովով տասներկու ժամու չափ։ Բայց դուք դրամ չունիք, և պէտք է ձեզ։ Առէք սա գօտին, որոյ մէջ երեք հարիւր ֆիորին կայ, և ձեր մէջքը կապեցէք։

—Բարեկա՛մ ... ըսաւ Մաթիաս Սանտորֆ։

—Յետոյ վերադարձուցէք ինձ, պատասխանեց ձկնորսն, երբոր ազատութիւն գտնէք։ Այժմ սպասեցէք ինձ։

Գործն այնպէս կարգադրուելէն յետոյ, Անտրէա Ֆէրրաթոյ դուրս ելաւ իւր սովորական գործոց զբաղելու, մերթ ծովեզրին վրայ աշխատելով, մերթ իւր տան մէջ։ Լուիճի քանի մ'ուրիշ նպար դրաւ փոխնորդ առագաստի մը մէջ, և նաւը տարաւ։ Վերջապէս Անտրէա Ֆէրրաթոյի ծրագրին արդիւնք լինելիք որ և է կասկած հնարաւոր չէր։ Խոհեմութիւնը մինչեւ այն կէտն հասուց, որ մինչեւ իրիկուն չգնաց իւր հիւրերուն քով։ Մաթիաս Սանտորֆ և Ստեփան Պաթորի ծածկեալ կեցան փոքր սենեկին մէջ, որոյ պատուհանը բաց մնաց միշտ։ Երբոր տունէն դուրս ելնելու վայրկեանը գար, ձկնորսը պիտի իմացնէր։

Մնաց որ, դրացիներէն մի քանին եկան միջօրէէն յետոյ ընտանեբար խօսակցեցան անոր հետ ձկնորսութեան և մասնաւորապէս Իստրիոյ ծովեզերաց մօտ թունաձուկեր երեւցած լինելուն վրայ։ Անտրէա Ֆէրրաթոյ իւր սրահն ընդունեց զանոնք, և ըստ սովորութեան ըմպելի ալ մատոյց անոնց։

Օրուան մեծ մասն այսպէս երթեւեկելով և խօսակցութեամբք անցաւ։ Փախչող բանտարկելոց վրայ ալ խօսք եղաւ։ Մինչեւ իսկ դրոյց տարածեցաւ պահ մը թէ բռնուեր էին Քուարնէրոյի ջրանցքին կողմն, Իստրիոյ հանդիպակաց ծովեզրին վրայ, զրոյց մը, որ քիչ յետոյ սուտ հանուեցաւ։

Ուստի ամեն ինչ յաջող կը թուէր։

Արդարեւ ծովեզերեայ ցամաքին վրայ սովորականէն աւելի հսկողութիւն կար թէ՛ մաքսադիտաց և թէ՛ ոստիկան զինուորաց կողմէ, այս մասին տարակոյս չկար. բայց դժուարին չէր խաբել զայդ հսկողութիւն, երբոր գիշեր լինէր։ Նաւահանգստէն դուրս ելնելու արգելքն առեւտրական մեծ նաւուց համար էր, և ոչ ձկնորսական նաւուց համար, որ ծովեզրէն շատ չեն հեռանար։ Այս պատճառաւ Անտրէա Ֆէրրաթոյի նաւը կրնար ծովեզրէն մեկնիլ՝ առանց բնաւ կասկած ազդելու։

Սակայն Անտրէա Ֆէրրաթոյ մաքէն չէր անցուցած զոյն այցելութիւն, որ տրուեցաւ իրեն իրիկուան ժամը վեցին միջոցները։ Անոր սպառնալից նշանակութիւնն այցելուին մեկնելէն յետոյ միայն պիտի հասկնար։

Ժամը վեց զարկած էր, Մարիա ճաշը պատրաստելու կ'զբաղէր, և արդէն սպասները դրուած էին սրահին սեղանին վրայ, տանը դուռը երկիցս բախեցաւ։

Անտրէա Ֆէրրաթոյ գնաց դուռը բացաւ առանց վարանելու, և զարմանօք տեսաւ որ Քարրէնա Սպանիացին էր։

Այդ Քարրէնա Մալթայի Ալմայութէ քաղաքէն էր, և ինչպէս Անտրէա Ֆէրրաթոյ Կորսիկայէն, սա ալ Սպանիայէն չուած էր, անշուշտ չար գործի մը պատճառաւ, և եկած Իստրիոյ մէջ բնակութիւն հաստատած։ Անդ աղագործութիւն կամ աղավաճառութիւն կ'ընէր, արեւմտեան ծովեզրին աղահանքերէն ելած աղերն երկրին ներսերը փոխադրելով, այսպիսի արհեստ մը, որով հազիւ իւր կեանքը կը պահէր։

Կորովի երիտասարդ մ'էր, հազիւ քսան-հինգ տարեկան, կարճահասակ բայց թիկնեղ, խոշոր գլխով, հաստ ու սեւ մազերով, դաժանի դէմքով, որ ինչպէս շան, նոյն և մարդու մը գլխուն վրայ քաջալերութիւն չներշնչէր։ Քարրէնա, անհամբոյր, կռուասէր, քինախնդիր, և մանաւանդ վատ մարդ մը լինելուն պատճառաւ սիրելի չէր երկրին մէջ։ Իւր հայրենիքէն հեռանալուն պատճառն ալ յայտնի չէր։ Աղահանքերուն մէջ շատ անգամ իւր ընկերակցաց հետ վէճ բացած, կռուած և մէկուն ու միւսին սպառնացած լինելով, յոռի համբաւ մը վաստկած էր. հետեւաբար ամեն ոք հեռի կը քաշուէր անկէ։

Սակայն Քարրէնա իւր վրայ տխուր կարծիք չունէր։ Ընդհակառակն։ Այս պատճառաւ էր որ կը համարձակէր յարաբերութեան մտնել Անտրէա Ֆէրրաթոյի հետ, ինչպէս պիտի հասկցուի հետեւեալ խօսակցութենէն։

Քարրէնա հազիւ քանի մը քայլ առած էր սրահին մէջ, Անտրէա Ֆէրրաթոյ արգիլեց զայն ըսելով.

—Ի՞նչ գործ ունիք աստ, ի՞նչ կ'ուզէք։

—Աստի կ'անցնէի, և լոյս տեսնելով ձեր տան մէջ, ներս մտայ։

—Ի՞նչ բանի համար։

—Ձեզ այց մը տալու համար, դրացի՛։

—Դուք քաջ գիտէք թէ ձեր այցերն հաճելի չեն ինձ։

—Սովորաբար, պատասխանեց Սպանիացին, բայց այսօր թերեւս այնպէս չլինիք։

Անտրէա Ֆէրրաթոյ չհասկցաւ և չէր կրնար գուշակել թէ ի՛նչ կը նշանակէր այս քիչ շատ առեղծական խօսք Քարրէնայի բերնին մէջ։ Եւ սակայն չկրցաւ զսպել սարսուռ մը, որ չվրիպեցաւ այցելուին ուշադրութենէն։

Քարրէնա փակեր էր դուռը։

—Խօսք ունիմ ձեզ, ըսաւ։

—Ո՛չ ... դուք խօսք չունիք ինձ։

—Այո՛ ... առանձնակի խօսելիք ունիմ ձեզ, աւելցուց Սպանիացին ցածցընելով իւր ձայն։

—Ներս եկէք ուրեմն, պատասխանեց ձկնորսն, որ նոյն օրը պատճառ ունէր իւր տան մուտքը ոչ ումեք փակելու։

Քարրէնա՝ Անտրէա Ֆէրրաթոյի առաջնորդութեամբ՝ անցաւ մեծ սրահէն և անոր սենեակը մտաւ։

Այս սենեակ բարակ միջնորմով մը բաժնուած էր Սանտորֆ կոմսին և նորա ընկերին նստած սենեկէն. մին տանը ճակտին վրայ կը նայէր, միւսը պարտիզին վրայ։

Երբոր երկուքը մինակ մնացին.

—Ի՞նչ կ'ուզէք ինձմէ, հարցուց ձկնորսը։

—Դրացի՛, պատասխանեց Քարրէնա, ձեր բարեկամութեան հրաւէր մ'ընելու եկած եմ։

—Ի՞նչ բանի համար։

—Ձեր աղջկան համար։

—Աւելի խօսք չեմ ուզեր։

—Բայց մտիկ ըրէք ... ։ Դուք գիտէք որ ես կը սիրեմ զՄարիա և ջերմապէս կը փափաքիմ կնութեան առնուլ զայն։

Այս էր Քարրէնայի յաւակնութիւնն։

Արդարեւ, քանի մ'ամսէ ի վեր աղջկան ետեւէն ընկած էր։ Դիւրաւ կը հասկցու թէ առաւել անձնական շահն էր շարժառիթը, քան թէ սէրն։ Անտրէա Ֆէրրաթոյ թէ և ձկնորս մ'էր, բայց դիւրակեաց, իս այդ չքաւոր Սպանիացւոյն հետ բաղդատմամբ՝ հարուստ։ Ուստի շատ բնական էր որ Քարրէնա փափաքէր փեսայ լինիլ նմա Բայց և նմանապէս յոյժ բնական էր որ ձկնորսն ալ բացարձակապէս մերժէր զայն, որովհետեւ չէր կրնար բնաւ յարմարիլ իրեն։

—Քարրէնա՛, պատասխանեց Անտրէա Ֆէրրաթոյ պաղութեամբ, դուք արդէն դիմեցիք աղջկանս, և բացասական պատասխան ստացաք։ Այսօր դարձեալ եկեր կը պնդէք։ Ես ալ նոյն բացասական պատասխանը կուտամ ձեզ վերջնապէս։

(Շարունակելի)

գից յետոյ։ Թաղումը բաւականին չքեղ էր․ Չնայելով վարձած գլխաւորին, եկեղեցուց մինչ Հայոց գերեզմանատունն մօտ կէս մղոն տարածութեամբ ուսանողութիւնն հանգուցեալոյ դիակը, սպիտակ դագաղում, ձեռքով տարաւ։ Մի քանի փունջեր դագաղի վրայ էին դրած․ իսկ մէկը, «իւր ընկերներից» նուիրեալ, դագաղի առաջով, քահանաների հետ միասին ուսանողներից մէկն էր տանում։ Ոչ մի հանգուցեալոյ, մինչ գերեզման ձեռքով տանիլ մեզ չէ պատահած տեսնել, նոյնպէս երբէք չենք տեսած որ հայ քահանայքն մինչ գերեզմանատունն դագաղից առաջ գնային։ Սակայն այս անգամ ընկերների-ուսանողների ցանկութիւններին համաձայն և չնորհիւ Արժ. Աղիզեանց քահանայի, որը ժամանակաւորապէս այս տեղ է գտնվում, յաջողուեց հանգուցեալի յուղարկաւորութիւնն մինչ գերեզման եկեղեցական դասով կատարել։

Քահանաները հանգուցեալի դիակին դագաղի հետ գնում են մինչեւ ճանապարհի կէսը, իսկ այնուհետեւ իրանք կառքով առաջ գնում են գերեզմանատուն և այնտեղ սպասում։

Մեր հայերի մէջ մերթ ընդ մերթ յոյժ ուշադրութեան և գովելի դէպքեր են տեղի ունենում, դէպքեր, որոնք իրենց նմանները թէ դժուար ունենում են ուր և իցէ։

Դեկտ. 26ն էր, տօների պատճառաւ Բեդրբուրգի հասարակութիւնն Նեւսկի Պրոսպէկտ մեծ փողոցի վրայ աշխարհին բազմութեամբ դըրդում է։ Հայոց եկեղեցուց, որը քաղաքի ամենայաջող մի մասումն, կենդրոնումն է շինուած, Նեւսկի Պրոսպէկտի վրայ, հայ ուսանող հասարակութիւնն, մօտ 70 հոգի, 2 քահանաներով ու 2 սարկաւագներով, դուրս է բերում իւր ընկերոջը դիակը, որին հետեւում է դիակառքը։ Մի տասն քայլ գնալուց ըղկնի, հայ օրիորդ մը մօտենում է դագաղին և ինքը ուսանողների հետ տանում դագաղը․ բոլոր բազմութիւնը զարմացմամբ նայում է այս յուղարկաւորութեանն, երիտասարդ հասարակութեան, հայ քահանայից և վերջապէս հայ օրիորդի գովելի անձնուէր պարտաճանաչութեան վրայ․ ինչ ուզում էք ասէք, բայց սա այնպիսի մի ուրախ, օրինակելի, գովելի մի երեւոյթ է, որ հայ մարդու սիրտը միանգամայն չարժում ու գոհացնում է։ Չնայելով դագաղի ծանրութեանն, հայ օրիորդ ուսանողուհին Խուդատեանցը մինչ գերեզմանատուն իւր ցանկութեամբը ճանապարհի կէսը բռնած ունէր դագաղը։ Մի երկու հայ մարդ այս իրողութիւնն տեսնելուց զկնի, մեզ հարցնում էին, թէ արդեօք Հայաստանեայց Ս. Առաքելական եկեղեցւոյ աւանդութեանն հակառակ չէ՞ կին մարդի մասնակցութիւնն հանգուցեալոյ դագաղին տանելում․ մենք պատասխանեցինք, թէ այդպիսի մի օրինակի գոնէ չենք պատահած հայ եկեղեցւոյ աւանդութեան մէջ և թէ սա այնպիսի անմեղ մի բան է, որ հայ Ներողամիտ եկեղեցին անկասկած թոյլտուութեամբ կը նայէ և այս երեւոյթի վրայ։ Աւելորդ է ասել մինչեւ անգամ, որ օրիորդը հանգուցեալին չգիտէր անձամբ, այլ մասնակցում էր իբր ուսանողուհի։

Հանգուցեալը այն կարգ ուսանողներիցն էր, որոնք բաղդի անյաջող բերմունքների ազդեցութեան տակ բռնպուած են լինում սուս ու փուս տոկուն անձնուիրութեամբ օրերով, չաբաթներով անճաշ, անթէյ մնալ, ինչ է որ վերջը այն հասարակութեան առաջ որ տեղից դուրս են եկել սեւերես չմնան և այնպէս վերջը կարող լինեն կարողացածին չափ իրանց կոչմանը համապատասխան ծառայութիւններ անել։ Հանգուցեալը, որպէս չքաւոր ուսանող, տեղւոյս եկեղեցւոյ տուած 15 ռուբլիով պարտաւորուէր էր ապրել ամիսը, որից միայն 9 ռուբլին ստիպուած էր սենեակի վարձ տալ։ Այժմ, ընթերցողը թող ինքը տեսնէ, արդեօք մնացեալ 6 ռուբլիով նա ի՞նչ քարը գլխին տայ․ զորանով 30 օր ճաշի՞ տայ, թէյ ու չաքա՞ր առնէ, լուացարարի և լոյսի՞ տայ, վերջապէս ո՞ր ամենակարեւոր պիտոյքն հոգայ։

Չքաւոր հայ ուսանողներն, որ գըլխաւորապէս գաւառ-գիւղի հայ հասարակութեան ընտանիքներէն են դուրս եկած, դեռ եւս օտարութեան և թըշուառութեան օրերում իրենց բնութեան մէջ կրում են այն արժանացած սովորութիւններն՝ ամօթխածութիւն, համեստութիւն և բարոյական պատկառանք, որոնք աւելի որոշ կերպիւ արտայայտում են մեզ մեր գիւղացու ընտանիքներում տիրող անարատ գովելի յատկութիւններ․ միեւնոյն երեւոյթը նկատվում է և քաղաքացի չըքաւոր այն ուսանողների մէջ, որոնց ընտանեկան իսկ պայմաններն ապրուստի և դաստիարակութեան կողմից համարեա թէ չատ քիչ են զանազանվում առաջիններից։ Եւ իսկապէս ասած այն անտանելի թշուառ դրութիւնն, որին նա տարիներով ենթակայ է առանց ձայն ու ծպտուն հանելու և որը մէկ մէկ տարաժամ դէպի սառը հող է գլորում, գլխաւոր պատճառներից մէկն էլ այս յատկութիւնների մէջ է փնտռած։ Դիմում են եկեղեցական ժողովին, թէ 15 րուբլիով ապրել չի լինի, մի 5 րուբլի աւելացրէք․ ո՞վ ում է լսում, բաւական է որ մօտ 20 հոգու միեւնոյն գումարը, փոքր ինչ քիչ կամ աւել տալով, իրանց պարտականութիւնը կատարած վերջացած են համարում։ Անկասկած աւելի նպատակայարմար է 10 հոգու 30ական ռուբլի տալ ամիսն որ ապրել կարելի լինի, քան 20 հոգու 15ական ռուբլի։ Այս վերջին ամսականով ուսանողի ձեռքն ու ոտքն է կապվում, նա այդ գումարով չի ապրում, այլ մի երկու երեք տարի գոյութիւնը մի ինչ կերպ պատսպարելով կամ այստեղ է մեռնում, կամ թոքախտ ստանալով հայրենիք վերադառնում։ Վերջապէս ընթերցողին երեւի ձանձրացրինք հայ չքաւոր ուսանողութեան վիճակի վրայ անտեղի երկար խօսելով․ որպէս զի փոքր ինչ ընթերցողի ներողամտութեանն արժանանանք, աճապ անցնինք հայ ուսանողութեան տուած երեկոյթին, որ տեղի ունեցաւ անցեալ ամսւոյ 28ին, տեղւոյս «Կոնոնով» կոչուած թատրոնում։

Նախ քան խօսիլ երեկոյթի մասին, հարկաւոր ենք գտնում ասել, որ Բեդրբուրգի հայ ուսանողութիւնն երկար տարիներէ ի վեր, վաթսնական թըւականներից, տարին դէթ մի անգամ սոսկ հայկական երեւոյթ տալու գեղեցիկ ու յոյժ գովելի սովորութիւնն ունեցել է և անխախտ չարունակվում է այժմ։ Ուսանողութիւնն երեկոյթներ տալով միշտ երկու նպատակ է ունեցել․ նախ կարողութեան չափ մտածել է մի միջոց, որով կարելի լինի մօտեցնել, ճանաչել, միացնել մայրաքաղաքի զանազան կողմերում գտնուած հայ ընտանիքներին, նոցա մօտեցնել անել յիշելու պարզօրէն իրանց հայրենի կեանքը, նիստ ու կացը, լեզուն, սովորութիւններն․ երկրորդ՝ այդ գեղեցիկ մօքի տակ կարողութիւն ունենալ ժողովել մի գումար չքաւոր հայ ուսանողներին օգնելու, մանաւանդ այն ժամանակներն երբ հայ եկեղեցին օգնութեան չէր հասնում չքաւոր հայ ուսանողին։ Անկասկած այս խորհուրդով և գաղափարով ղեկավարուելով, ուսանողութեան երեկոյթները պէտք է որ աւելի շուտով ընտանեկան, սոսկ հայկական բնաւորութիւն կրէին, ինչպէս և իրօք կրում էին․ սակայն այս երկրորդ տարին է, որ հայկական երեկոյթներում սորանից դէթ երեք չորս տարի առաջ տեղի ունեցող հայկական կերպարանք կրող սովորութիւններից մի քանիսը, յոյժ զգալին, վերացրել են․ բայց մեր հարցից չշեղուեցանք, ուրեմն սկսինք այս տարուայ երեկոյթի մասին։

Երեկոյթի ծրագիրը յոյժ բազմատեսակ էր։ Ներկայացում, կենդանի պատկերներ բեմի վրայ, բալետի պարսկական մելամաղձային եղանակները, որը չատ գեղեցիկ կատարեց երաժշտութիւնը․ բեմի վրայ ազգային հագուստով տեղական Կովկասու պարեր, դուէթներ, այնուհետեւ եւրոպական պարերգութիւն, հանդերձ անխուսափելի լեզգինկայով։ Ծրագրից արդէն երեւում է, որ հայկական երեկոյթը մեծ բազմութիւն պէտք է գրաւէր և չատ ուրախ անցնէր, որ այդպէս էլ եղեւ ինչպէս առաջինի վերաբերութեամբ այնպէս և երկրորդի։ Երեկոյեան ժամի ութին սկսուեց Հ. Սունդուկեանցի «Պէպօ» Կոմեդիայի ներկայացումն, որի բովանդակութիւնն վեր է առած Թիֆլիզի հայ հասարակութեան ներքին դասակարգի բնութիւնից։ Դերասանները առ հասարակ գոհացուցիչ էին, բայց գլխաւորապէս խաղին յաջողութիւն, դուարթութիւն տուին իւրեանց խաղով Եփիմիայի դեր կատարող տիկին Բելայա (քոյր հանգուցեալ Բասամեանցի), Կակուլի դեր կատարող Պ. Բալանթարեանը և Ցարութենի դերում մասամբ Պ. Թագիանոսեանց։ Սակայն այս կոմեդեան այն դժուար, խիստ բնաւորութիւններ արտայայտող թատերգերից մէկն է որոնց կատարելը թատերասէրների ոյժերից վեր է։ Իսկապէս և սորանով էլ բացատրվում է, թէ ինչու խաղը ընդհանրապէս այնքան էլ յաջող չանցաւ, և գլխաւորապէս ամբողջութեան պակասութիւնն աներեւ էր։ Անտարակոյս տաճկահայ ընթերցողին անծանօթ է մեր թատերգակ Պ. Սունդուկեանցի այս կոմեդեայի բովանդակութիւնն։ Ուստի, այդ հիման վրայ ահա ձեզ այդ կոմեդեայի կարճառօտ բովանդակութիւնն։

Հայ հարուստ վաճառական Ցարութիւնն մի խեղճ ձկնորս–Պէպօի փող է պարտական․ պարտամուրհակը կորել է․ Ցարութիւնն օգուտ քաղելով այս դէպքից ուրանում է իւր պարտքը, այն ինչ այս փողը նշանակուած էր որպէս բաժինք, օժիտ, Պէպօի քոյր Կէկէլին։ Կէկէլը արդէն նշանադրուած է, բայց փեսացուն երբոր սպասելէն զկնի Կէկէլի ծնողներին վերջին ժամանակամիջոց է նշանակում, երբ նոքա պարտաւոր են ներկայացնել խոստացած փողը, հակառակ դէպքում նա սպառնում է թէ կը պսակուի ուրիշ աղջկայ վրայ։ Պէպօն այս ամենադժուար վիճակում վերջին անգամ դիմում է Ցարութիւնին աղերսանքով չմերժել, պարտքը չուրանալ և խեղճ աղջիկը չթշուառացնել։ Բայց Ցարութիւնն և այս անգամ յանձն չի առնում վճարել և երբ նա երդւում է ուտում թէ ոչինչ պարտական չէ (բստ որում փողը, Պէպօի հանգուցեալ հօրիցն է առած), Պէպօն գժվում է և տաքութեան միջոցին անպատւում, խփում Ցարութիւնին։

Իւր ջահիլ, երկրորդ կին Եփիմէից թելադրուած, Ցարութիւնն գանգատւում է Պէպօի վրայ, որին և բանտարկութեան են մատնում։ Այս միջոցին գտնվում է պարտամուրհակը․ Ցարութիւն տեսնելով որ իւր փառքը, անունն, արժանապատւութիւնն յայտնի է դառնալու, խայտառակուելու է, գալիս է Պէպօի մօտ հաշտուելու և խոստանում կրկնակի վճարել պարտքը, միայն թէ սուս ու փուս բանն մէջտեղից վերջանի։ Իսկ Պէպօն, մի միայն Ցարութիւնին խայտառակելու տեսակէտից, նորա խաբեբայութիւնը երեւան հանելու նպատակաւ, գտած պարտամուրհակն Աստուծոյ սուտ է անուանում, որով պէտք է գլխաւոր Ցարութիւնի գլուխը և այդպէս վճռում է գնալ բանտ, որտեղից դուրս գալէն զկնի իւր վրէժ հանելու է․ բանտը գնալուս ասում է «Թող այժմ ամենքը իմանան, որ այս մարդը, որին բոլորը սիրում ու յարգում են, ոչինչ, ոչ մի սուրբ բան չունի աշխարհքումս»։ Ահա՛ սորանով և վերջանում է կոմեդեան։

Երկրորդ և երրորդ գործողութիւններից յետոյ նուագախումբը յաջողութեամբ կատարեց «Բայրաթին» որը ծոցվորդի բուռն ծափահարութեամբ կրկնուեցաւ։ Շնորհիւ տեղւոյս հայ հասարակութեան և Բեդրբուրգի ապրող այն օտար հասարակութեան, որը սիրում է յաճախել «կովկասեան երեկոյթները» և պարել, բաւականին մեծ բազմութիւն կար այդ երեկոյ․ ներկայացումից յետոյ տեղի ունեցան չորս կենդանի պատկերներ, ռուս Լերմոնտովի հեղինակութիւն «Դեւ» բանաստեղծութիւնից վերցուած։ Այս կենդանի պատկերները իրաւ որ մեծ տըպաւորութիւն թողեցին հանդիսականների վրայ․ կենդանի պատկերներ դընողը յայտնի նկարիչ Պրոֆէսոր Մակովսկին էր․ Կովկասեան լեռների դաշտերի ու ստորոտների վրայ բնիկ ժողովուրդը բազմած իւր առօրեայ կեանքով, Դեւը, որը փայփայում է Թամարային, վրաց Թագուհու՞ն և այլն, ահա կենդանի պատկերների նիւթը։

Կենդանի պատկերներից զկնի թառ, թակի, զավալի, տափի, մի խումբով տեղական երաժշտական մի քանի գործիքների ձայների ազդեցութեան տակ, տեղական կովկասու հագուստ հագած կին ու երիտասարդ չատ ուրախ ու գեղեցիկ մի քանի անգամ պարեցին բեմի վրայ։ Այնուհետեւ սկսուեց եւրոպական պարերգութիւնը երկու ընդարձակ դահլիճներում։

Հասարակութիւնն պարերգութեան միջոցին, ներկայացումից զկնի այնքան չատացաւ, որ երկու ընդարձակ դահլիճներում պարելու տեղը խիստ անբաւարար էր։ Բազմատեսակ զուարճութիւնները երեկոյթին յոյժ կենդանութիւն տուին, և պարող ու հանդիսատես հասարակութիւնն առաւօտեան չորս ժամին, վերջին լեզգինկայի ազդեցութեան տակը, որով վերջացաւ երեկոյթը, ուրախ, զուարթ ցրուեց զանազան կողմ, անկասկած բաւականին ուրախ անցկացրած ժամանակով։ Կարծեօք յօգուտ ուսանողներին մնաց 600 ռուբլի, չնայելով որ բոլոր մուտքը 1300ից անց էր։

Մենք վերեւ նկատեցինք թէ այժմ, այս երկրորդ տարին է, ինչ ուսանողական երեկոյթները առաջուան հայկական երեկոյթներ կրելուց փոքր առ փոքր հեռանում են։ Ահա ինչպէս առաջին տարիների ներկայացումներին հայ տարրը մեծամասնութիւն էր կազմում, որ մի չատ քաղցր տպաւորութիւն էր թողնում հայ մարդու վրայ։ Թէեւ երեկոյթն, իրաւ, ուրախ զուարթ անցաւ, բայց պակասում էր մի բան, մի նշանաւոր բան․ դա ազգային աչխուժութիւն ասած բանն է․ հայ մարդը իրան ընտանի չէր զգում։ Այդ աչխուժութիւնն բնա՛ւ չ'կար, որովհետեւ միջնարարների միջոցին երբէք տեղի չունեցաւ հայերէն երգերի երգեցողութիւնը թէ՛ առանձին անհատներից և թէ՛ խմբեալ ուսանողներից․ այն ինչ առաջին տարիներում խաղի ամեն մի գործողութիւնից յետոյ որ կողմ նայէիր, աչքի էին ընկնում խումբ խումբ ժողովուած հայ ուսանողներ, մանաւոր գործի տէր հայ մարդիկներ տալիրան ձեռքերին, Թափթակը, նէյը բերներին հայկական ազգային ժողովրդային երգեր երգելու․ երգեցողութիւնը, տեղական պարերը, թաթաթակի՝ նէյի, թառի մելամաղձային ներդաշնակութիւնը մինչ այն աստիճան էին զբաղեցնում նոյն իսկ օտարական հասարակութեանն, որ չատ անգամ եւրոպական պարերի փարիչ ստիպուած էր լինում չափաւորութեան մէջ գնելու համար ստիպման ներկայութիւնից օգուտ քաղել։ Նոյն իսկ այս քաղցր տպաւորութեան տակ էինք, երբ սորանից երկու տարի առաջ մենք մեր մի գըրութիւնն Թիֆլիզի լրագիրներից մէկում թատրոնական ներկայացման մասին այս կերպ էինք վերջացրել․

«Ժամի 4 էր արդէն, երբ մի հսկայ պարթեւ Բուլթախեցի հայի բարձրաձայն սրտոտ երգը դղրդեցնելով ամբողջ երկու երեք ընդարձակ դահլիճները իւր զարմանալի բարձր, պարզ, յստակ ձայնով թառի, նէյի մելամաղձային ներդաշնակութեամբ և զարմանալի չնորհալի կերպիւ մանները տափերայի վրայ արընթաց սահեցնելով, ճանապարհ էր ձգում ուրախ տպաւորութեան տակ պարող և հանդիսատես հասարակութեանն դէպ ի տուն։»

ԵՐԵԿԻ ՍՈՒՐՀԱՆԴԱԿԷՆ

ՔԱՂԱՔԱԿԱՆ ԵՒ ԱՐՏԱՔԻՆ ԼՈՒՐԵՐ

Պ. ՃԷՅՄՍ ՊՐԱՅՍ. Պ. Կլատստոն ամբողջացուց իւր Վարչութեան կազմութիւնն։ Երեկի Սուրհանդակաւ առնուած լրագիրք կը պարունակէին միացած անուանումներն։ Ասոնց մէջ կարեւորագոյնն է Պ. Ճէյմս Պրայսի անուանումն, որ Արտաքին Գործոց Նախարարութեան Խորհրդական եղած է, պաշտօն զոր նախորդ պահպանողական նախարարութեան մէջ կը վարէր Հանրածանօթ Պ. Պուրք, և նախորդ ազատական նախարարութեան մէջ վարած էին Լորտ Էտմընտ Ֆիձմօրիս և Սըր Չարլզ Տիլք։ Արտաքին գործոց Խորհրդականն առաջի Երեսփոխանութեան ներկայացուցիչն է նախարարութեան արտաքին աշխարհավարութեան, և ո՛չ նուազ բաժին ունի այդ արտաքին աշխարհավարութեան ուղղութեան մէջ։ Պ. Ճէյմս Պրայս, որ Կ. Պոլիս այցելած է, քաջածանօթ է ասոր Ուղեւորած է արեւելեան երկիրներ, և հրատարակութիւններ ու բանախօսութիւններ ունի արեւելեան երկրաց վըրայ։ Պ. Ճէյմս Պրայս ազատական-արմատական մ'է ներքին քաղաքականութեան մէջ․ Անգլիոյ ամենալաւ իրաւագէտներէն մին է․ կրթուած է Անգլիոյ և Գերմանիոյ համալսարանաց մէջ։ Ալպէրտինի հարաւային շրջանակին Երեսփոխանն է։ Անձնական սերտ բարեկամութիւն ունի Պ. Կլատստոնի հետ։ Տէյլի Նիւզ կը ծանուցանէ թէ Լորտ Կըրանվիլ, Գաղթականութեանց պաշտօնատան գործերը չատ ծանր գտնելով իւր ծերութեան ու տկարութեան մէջ, մտադիր է քիչ ժամանակէն հրաժարիլ, և պատուակալ պաշտօն մը միայն ընդունելով նախարարութեան մէջ։ Ցայնժամ Լորտ Ռոզպէրի պիտի անուանի եղեր Գաղթային Նախարար, և Սըր Չարլզ Տիլք՝ Արտաքին գործոց Նախարար։ Այս կարի հաւանական պատահականութեան մէջ, Անգլիոյ արտաքին աշխարհավարութիւնն երկու Արմատականներու յանձնուած պիտի ըլլայ, որ կրնայ նշանաւոր փոփոխում մը մուծանել Մեծին Բրիտանիոյ աւանդական աշխարհավարութեան մէջ։ (Հավաս մեզ չհեռագրեց Պ. Ճէյմս Պրայսի անուանումն, այն գերազանց պատճառաւ անշուշտ թէ Անգլիոյ արտաքին գործոց Նախարարութեան վերաբերող այնպիսի կարեւոր անուանում մը Պ. Հանրի Ռոշֆոռի Բարիզի Երեսփոխանական Ժողովէն հրաժարելուն չափ չահեկան չի կրնար ըլլալ Արեւելեան Եւրոպիոյ կառավարութեանց ու բնակչաց։)

Ալպէրտինի կոմսն Իռլանտայի Փոխարքայ անուանեցաւ, պաշտօն մը որ դեռ կը պահէր, սպասելով որ Իռլանտա ձեռք բերէ վ'իր Ինքնօրինութիւն։— Լորտ Ուըլվըրդըն Թըղթատարութեանց և Հեռագրաց Նախարար անուանեցաւ։— Կոմս Մորլի՝ Հանրօգուտ չինուածոց Նախարար։— Տոքթոր Սըր Լայըն Բլէյֆէյր՝ Հանրային Կըրթութեան Նախարար։— Բարիզի կաթոլիկ Թերթերը գոհունակութիւն կը յայտնեն տեսնելով թէ Պ. Կլատստոնի Վարչութեան անդամոց մէջ կան երկու կաթոլիկներ, լորտ Րիբըն, Ծովային Նախարար, և Պ. Չարլզ Ռուսէլ, Ընդհանուր Դատախազ։

Պելկրատէ կը հեռագրուի թէ «Սերպիա պատերազմ եւ պատուաւոր խաղաղութիւն մը միայն պիտի ընդունի։ Այս պատճառաւ, սերպ կառավարութիւնը կը չարունակէ զգուշութեան միջոցներ ձեռք առնուլ, (պատերազմական պատրաստութիւնները չարունակելով,) թէեւ պատերազմի նորոգման չի փափաքիր։ Եւ մինչեւ որ ստիպողական հարկ մը չտեսնէ, Սերպիա նորէն զէնքի չպիտի դիմէ։»—Այս դիւանագիտական խօսքեր պարզապէս կը նշանակեն թէ Սերպիա, մարտի սկիզբը պատերազմը վերսկսելու սպառնալիք մը կ'ընէ, Պուքրէշի բանակցութեանց վրայ ազդելու համար։

Միլան Թագաւորը, կ'ըսէ Պելկրատէ Հավասի հեռագիր մը, ամեն կէտերու վրայ համամիտ է իւր Նախարարութեան, և հետեւապէս Պ. Կարաշանինի անկման զրոյցք անհիմն են։

Վիէննայէ Հավասի հեռագիր մը կ'ըսէ թէ «Յունաստանի դէմ Նաւային ցոյց մը ո՛չ եւս կարելի կը համարուի»։ «Ցոյցին սկզբան վրայ Տէրութիւնք համաձայն են, բայց . . . գործադրման միջոցին և ունենալիք ընդարձակութեան մասին տարակարծիք են։»— Այս կը նշանակէ թէ նոյն իսկ Ցոյցին վրայ տարակարծիք են․ զի Նաւային Ցոյցն ամենէն առաջ գործադրութիւն մ'է ի հարկէ, և գործողութեան մը գործադրութեան վրայ համակարծիք չլինիլ, ո՛չ մի կէտի վրայ համակարծիք չլինել կը նշանակէ պարզապէս։

Պ. Կարաշանին հրահանգ տուեր է Պ. Միեադովիչի Պուլկարիոյ հետ հաշտութեան բանակցութեանց մէջ Պուլկարիոյ միութեան խնդիրն յուզելու։ Բ. Դուռն, ընդհակառակն բացորոշապէս յայտարարեր է թէ այս խնդրոյ վրայ չպիտի վիճէ Սերպիոյ հետ, քանի որ պուլկարական խնդիրը միայն Բ. Դրան կը վերաբերի, իբրեւ Պուլկարիոյ գերիշխան Տէրութեան։— Բ. Դրան յայտարարութեան ոյժ տուեր է Պելկրատի ռուս դեսպանն, յայտարարելով թէ Ռուսիա բնաւ չընդունիր որ սերպօ-պուլկար բանակցութեանց մէջ Պերլինի Դաշնագրոյն վերաբերող կարգադրութեանց խօսքը լինի։

Պելկրատէ կ'իմանանք փետր. 7 թուով թէ «Սերպ բանակն ի Վրանիա պիտի համախմբի։»— Այս ծանուցում կամ չատ բան կը նշանակէ, կամ ոչինչ կը նշանակէ։ Սերպերուն ամրացեալ բանակեղին էր ցարդ ի Նիշ, ուստից Պուլկարիոյ և մանաւանդ Սոֆիայի կը սպառնային։ Վրանիայի, աւելի դէպ ի հարաւակողմ, անմիջապէս օսմ. սահմանագլխին կը սպառնայ, և՝ Քիւսդէնտիլի կողմէ՝ անուղղակէս միայն կը սպառնայ Պուլկարիոյ։ Արդեօք Սերպք ըսե՞լ կ'ուզեն թէ, զԹուրքիա դաշնակցած տեսնելով ընդ Պուլկարս, կը կամին մէկ քարով թէ՛ Պուլկարը և թէ՛ Թուրքը զարնել մորթ սմսուն մէջ։ Եթէ զայս ըսել չեն ուզեր, եթէ իրենց պատերազմի նորոգման սպառնալիքը դարձեալ Պուլկարիոյ դէմ միայն ուղղեալ է, Նիշի բանակեղին ի Վրանիա փոխադրումը բան մը չի նշանակեր․ զի այով Սերպերուն դիրքը չի զօրանար, և առ առաւելն Պելկրատի ճամբան բաց թողուած կը լինի Պուլկարաց առջեւ։

Հորվադովիչ զօրավարին սպայակոյտը սերպ բանակին պիտոյից հայթայթիչներուն հետ նոր պայմանագրեր կնքեր է ձիերու և ռազմանիւթերու կարճ պայմանաժամով յանձնման համար։

Վերջին սերպօ-պուլկար պատերազմին մէջ իրենց գործած սխալներուն համար, սպայակոյտի պետ Պենիքի և հազարապետ Կրուիչ եռամեայ բանտարկութեան դատապարտեցան, և ուրիշ երեք բարձրաստիճան սպայներ, որք անձնապէս Միլան Թագաւորին բարեկամութիւնը կը վայելէին, պաշտօնազուրկ եղան։

Պելկրատէ փետր. 7 թուով հեռագիր մը զրոյց մը կը յիչէ թէ Միլան Թագաւորը Վիէննա պիտի երթայ՝ քաղաքական արդի կացութիւնը պարզելու։ Ի Վիէննա Ն. Վեհափառութիւն առիթ կ'ունենայ նոր խրատներ և խորհուրդներ ստանալու այն խորախորհուրդ աչխարհավարներէ, որք զինք քաջալերեցին Պուլկարիոյ դէմ պատերազմի հրատարակման յիմարական ձեռնարկին մէջ։

Վիէննայէ Հավաս կը հեռագրէ թէ չի կարծուիր որ Ֆրանսա մասնակցի Նաւային Ցոյցին որ «ամենակատարեալ ամլութեան դատապարտուած լինել կը թուի»։

Աթէնքէ կը ծանուցուի թէ Հելլէն կառավարութիւնը «մեծ դժուարութեանց» կը բախի իւր 100 միլիոն Փր. ի նոր փոխառութեան կնքման համար, և թէ «այս դրամական գործողութեան յաջողութիւն երկրայելի կը թըւի»։ — Ըսել է թէ Պ. Տէլիեաննիս չի գտներ եւրոպացի լուրջ դրամատէրներ, որք չորս միլիոն անգլ. ոսկի իրեն փոխ տան՝ ծայրայեղ անխելքութիւն մը գործելու համար Թուրքիոյ հետ պատերազմի բռնուելով։

Պելկրատէ հեռագիր մը կը հերքէ սերպօ-հելլենական դաշնակցութեան մը լուրը։ — Սերպիոյ պատերազմական նախարարը ծանուցեր է Ա և Բ կարգի պահեստներուն որպէս զի պատրաստ լինին զինւոյ ներքեւ կոչուելու։

Ռուսիա մասնաւորապէս կը հակառակի, — կ'ըսէ Պերլինէ հեռագիր մը առ Տէյլի Նիւզ, — պուլկարօ-թուրք կարգադրութեան այն կէտին որուն համեմատ պուլկարական բանակն ի հարկին Թուրքիոյ հրամանաց ներքեւ պիտի դրուի, (և հետեւապէս՝ պուլկար զօրաց մէջ պաշտօն վարող ռուս սպայք թուրք զօրավարներէն հրաման պիտի ընդունին։) Բայց Երից կայսրութեանց մէջ բանակցութիւնք կը չարունակեն և Գերմանիա և Աւստրիա որոշեր են ընդունիլ թուրքօ-պուլկար կարգադրութիւնը, մինչեւ իսկ եթէ Ռուսիա մերժէ զայն։

Քօռէսպոնտէնց Պոլիտիք կ'իմանայ թէ Չարին կառավարութիւնն առարկութիւններ կը հանէ թուրքօ-պուլկար համաձայնութեան, բայց արգելք չպիտի լինի կնքեալ կարգադրութեան, նոր խնդիր մը չյարուցանելու համար։ Միւս կողմէ, Պերլինի Դաշնագրոյն մէջ մուծուած փոփոխմունք այնչափ կարեւոր չեն համարուիր որ Նոր Դեսպանախորհուրդ մը գումարուի Կ. Պոլսոյ մէջ։ Բանակցութեան նուազ հանդիսաւոր ձեւ մը պիտի ընդունուի, Թիւրիմացութեան տեղ չթողլու համար։

Փետր. 7ի առաւօտուն գոհաբանական աղօթք մատուցուեցաւ Սոֆիայի մայր-եկեղեցւոյն մէջ, Թուրքիոյ հետ գոյացեալ համաձայնութեան առթիւ։ Ալեքսանդր Իչխանը ներկայ էր, իւր նախարարներով, բարձրաստիճան պաշտօնատարներով ու սպայներով։

Ցետ արարողութեան, Իչխանը Սոֆիայի գնդոց զօրահանդէս մը կատարել տուաւ, և զօրաց ծանոյց Թուրքիոյ հետ եղած կարգադրութեան արդիւնքն, որ ուրախութեան աղաղակներով ընդունուեցաւ։

Սերպօ-պուլկար հաշտութեան բանակցութիւնք անցեալ շաբթու մէջ չեն կրցած սկսիլ․ որովհետեւ Մաճիտ փաշային ձեռքը գտնուած լիազօրութեան վկայականն անբաւական համարուեր է։ Ն. Վսեմութիւն ցոյց տուեր է Մեծ-Եպարքոսին մէկ հեռագիրն, որով իրեն պաշտօն կը տրուէր երթալ ի Պուքրէշ, Սերպիոյ հետ բանակցելու։ Պ. Միեադովիչ չէ ընդուներ բանակցութեան սկսիլ այս պայմանաց մէջ, և խնդրեր է որ մինչեւ առաջիկայ նստին օրն աւելի կանոնաւոր վկայական մը ներկայացնէ Ն. Վսեմութիւն։

Քօռէսպոնտէնց Պոլիտիքի Թղթակցին համեմատ, Րիւսթէմ փաշա յայտարարեր է կլատստոնեան դահլիճին թէ, եթէ Պ. Կլատստոն անգլ. նաւատորմիղ ետ առնու Յունաստանի սպառնացած կէտերէն, Թուրքիա պիտի պարտաւորի ելք մը տալ արդի կացութեան՝ պատերազմ հրատարակելով Յունաստանի դէմ․ զի օսմ. գանձարանն երկար ժամանակ չի կրնար դէմ դնել 400,000 զօրաց պաչտպանման ծախուց։

ԱԶԳԱՅԻՆ ԼՈՒՐԵՐ

Ադրիանուպոլսէն մեզ կը գրեն թէ Ս. Երուսաղէմի պարտուց բարձման ի նպաստ երեքական ղրշ-ի տրոց գանձման համար, կուսակալութենէն Առաջնորդարանին մատուցուած Թադրիրի մը համեմատ, զինուորական տուրք վճարողաց անուանց ցանկերը չինուեր և առանձին ազգարարութեամբ մը ազգայնոց ալ տեղեկութիւն տրուեր է։ Մեր թղթակիցը կ'ըսէ թէ Թաղեցւոց մէջ կարող եղողները մեծաւ մասամբ պիտի մասնակցին սոյն հանգանակութեան իրենց առաջուց վճարած զինուորական տրոց քանակութեան համեմատութեամբ, որով անկարողները ի բաց կը թողուին․ բայց հետաքրքրաչարժ է գիտնալ թէ օտար տէրութեանց հպատակ հայազգիք որք Թուրքիոյ մէջ ստուարամթիւ են և մեծաւ մասամբ կարող դասուն կը պատկանին, պիտի՞ մասնակցի՞ն այս հանգանակութեան․ նոքա եւս հայ լինելով, միթէ պարտաւոր չե՞ն իրենց ազգայնոց համակերպիլ։

Լուր կը տրուի մեզ թէ Նարլը-Գափուի Խորէնեան վարժարանին 40ի չափ աչակերտք՝ աղքատ և հարուստ միանգամայն իրենց չաբաթականները կանոնաւորապէս չվճարելնուն պատճառաւ Հոգաբարձութեան կողմանէ արտաքսուած էին դպրոցէն։

Սոյն արտաքսեալ աչակերտք պարտաւորուեր են դիմել տեղւոյն Ճիզուիթաց դպրոցն ուր խմբովին և ձրիաբար ընդունուեր են Հայերէն եւս դաս առնելու պայմանաւ։

Սոյն ցաւալի խռովութեան վրայ, եթէ ստոյգ է, Ռումէլեական Խորհրդոյ ուշադրութիւնը կը հրաւիրուի։

Սարգիս էֆ. Զրաճեան մեծահարուստ ազգայնոյ յուղարկաւորութիւնն երէկ հազուադէպ շքեղութեամբ տեղի ունեցաւ ի Գում-Գափու։ Հմայեակ եպիսկոպոս պատարագմատոյց, և Ամեն. Ս. Պատրիարք Հայրը քարոզ խօսեցաւ։ Ներկայ էին Եպիսկոպոսներ և բազմաթիւ վարդապետներ ու քահանաներ։ Խուռն բազմութիւն ժողովրդեան դիմած էր ի Գում-Գափու մայրաքաղաքին ամէն կողմերէն։ Մահմէտականներ ալ շատ կային, որովհետեւ հանգուցեալը իւր բարեգործութեամբք սիրելի եղած էր մահմէտական ազգաբնակութեան։ Իւր վախճանման առջի գիշերը Մայր-Եկեղեցւոյ մէջ հսկում կատարուած էր, և յուղարկաւորութեան օրն այն մեծ եկեղեցւոյն զանգակը քանիցս հնչեց տխրագին։ Սարգիս էֆ. Զրաճեան Սահմանադրութեան հաստատումէն առջի տարւոյ մէջ Խաւարեալ կոչուած կուսակցութեան պարագլուխներէն կը համարուէր։ Բայց այնուհետեւ ազգային նշանաւոր գործունէութիւն մը չէր ունեցած, թէեւ քանիցս ընտրուած է Երեսփոխան և Թաղ. Խորհրդոյ անդամ։ Ամիրայական ժամանակի ճշմարիտ ներկայացուցիչ մ'էր ինչ ինչ նկատմամբք. և ի վաղուց ճանչուած էր իբրեւ «Նիշանճիի Ամիրան», ուր կը բնակէր, Մայր-Եկեղեցւոյն մօտ։ Բազմանդամ ընտանիք մը կը թողու։

Մայրաքաղաքիս Թուրք և Ֆրանսական թերթերն առ հասարակ մեծ գոհունակութեամբ կը ծանուցանեն ազգային երաժշտապետ Չուխաճեան Տիգրան էֆէնտիի պատուանշան ստանալն և գովեստիւք կը խօսին նորա վրայ։ Մասնաւորապէս Հաքիքաթ երկու սիւնակներ կը նուիրէ Չուխաճեան էֆէնտիի գովեստին և կը դրուատէ նորա հանճարն յայտարարելով թէ ո՛չ միայն ի Թուրքիա, այլ և յԵւրոպա ու յԱմերիկա տարածուած է Տիգրան էֆէնտիի համբաւը։

ՆԵՐՔԻՆ ԼՈՒՐԵՐ

ՊԱՏՈՒԱՆՇԱՆՔ ԵՒ ՊԱՇՏՕՆԱԲԱՇԽՈՒԹԻՒՆՔ

Առաջին կարգի Մէճիտիէ պատուանշան տրուեցաւ կայս. պալատան բժիշկ Տոքթ. Միւհլիկի։

Երկրորդ կարգի Մէճիտիէ՝ Ելմտական Նախարարութեան ծախուց հաշուակալ Մէճտէտտին էֆէնտիի։

Երրորդ կարգի Մէճիտիէ՝ նոյն Նախարարութեան հասութից հաշուակալ Մազհար պէյի։

Երրորդ կարգի Օսմանիէ՝ Դամասկոսի Ֆրանսական հիւպատոս Պ. Ժիլպէրի։

Սպարապետի Դրան ընդհանուր պիտոյից դիւանի երկրորդ ճիւղի հաշուակալ Րիզա պէյ, նոյն պաշտօնատան ընդհանուր հաշուակալութեան դիւանի երկրորդ ճիւղին տնօրէն անուանեցաւ։

Պետական Խորհրդոյ նախագահ Բարձր. Արիֆի փաշա, Արտաքին գործոց նախարար Վսեմ. Սայիտ փաշա և Դատական նախարար Վսեմ. Սէրվէր փաշա երէկ մասնաւոր գումարում մ'ունեցան ի Բ. Դուռն, նախագահութեամբ Բարձր. Մեծ-Եպարքոսին։

Թարիք կը կարծէ թէ սոյն խորհրդակցութեան առարկայ եղած է Թուրքօ-պուլկարական Պայմանագիրը։

Խորհրդակցութեան միջոցին, ռուսական դեսպան Պ. Նէլիտօֆ Բ. Դուռը գնաց և Սայիտ փաշա յանձնաժողովէն ելնելով տեսակցեցաւ դեսպանին և պուլկարական պատուիրակ Պ. Զանոֆի հետ, որ նոյն միջոցին Բ. Դուռը կը գտնուէր։

Պ. Նէլիտօֆ և Պ. Զանոֆ տեսակցեցան նաև Արտաքին գործոց նախարարի խորհրդական Վսեմ. Տատեան էֆէնտիի հետ։

Հելլենական դեսպան Պ. Քոնտուրիոթի երէկ Բ. Դուռն երթալով, յաջորդաբար տեսակցեցաւ Բարձր. Մեծ-Եպարքոսին և Արտաքին գործոց Վսեմ. Նախարարին հետ։

Իտալական դեսպան Քորթի կոմս, որ Լոնտոնի դեսպան անուանուած է, յառաջիկայ չորեքշաբթի Պրէնտիզիի ճամբով պիտի մեկնի մայրաքաղաքէս և Հռոմ հանդիպելով իւր նոր պաշտօնատեղին պիտի ուղեւորի։

Ներքին գործոց Նախարար Վսեմ. Միւնիր փաշայի նախագահութեամբ յանձնաժողով մը կազմուած է, որոյ անդամք են Ելմտական նախարար Զիհնի էֆէնտի, Հանրօգուտ Շինութեանց նախարար Զիւհտի էֆէնտի, մաքսատան վերատեսուչ Էտիպ էֆէնտի եւ Օսմ. Կայս. Պանքայի տնօրէնք Պ. Ֆոսթէր ու Պ. Տըլօ։ Սոյն Յանձնաժողովոյ պաշտօնն է Ելմտական նախարարութեան և Օսմ. Կայս. Պանքայի միջեւ գտնուած զանազան խնդիրները կարգադրել։

Րէժիի Վարչութեան գործառնութիւնք քննելու պաշտօն ունեցող Յանձնաժողովն երէկ դարձեալ ի նիստ գումարեցաւ Կրթական պաշտօնատան մէջ։ Խորհրդակցութեանց գլխաւոր առարկայ եղեր են այն միջոցներ զորս Րէժիի Վարչութիւնը ներկայացուցած էր Բ. Դրան, ծխախոտի մաքսանենգութեան առաջքն առնլու համար։

Մայրաքաղաքիս ամերիկեան դեսպան Պ. Քօքս այս երեքշաբթի օր Եգիպտոս ուղեւորեցաւ իւր տիկնոջ հետ։

Պ. Քօքս մեկնելէ առաջ պատիւ ունեցաւ Վեհ. Սուլթանին ներկայանալ՝ որ մասնաւոր ունկնդրութիւն մը շնորհած էր նմա, և Ն. Վեհափառութեան մատոյց իւր հեղինակած Երեք Տասնամեակ անուն գրքէն մի օրինակ, Թուրքերէն նօթով մը յորում բացատրուած էր գրքին բովանդակութիւնը։

Վեհ. Սուլթանն յոյժ սիրալիր ընդունելութիւն մ'ըրաւ Պ. Քօքսի և մեծ հետաքրքրութեամբ ունկնդրեց այն մանրամասնութեանց զորս դեսպանը պարզեց վիճակագրութեանց նկատմամբ։ Ն. Վեհափառութիւն բարեհաճեցաւ ծանուցանել Միացեալ Նահանգաց ներկայացուցչին թէ կայս. պալատէն հեռագիր մը պիտի ուղղուի ի Գահիրէ՝ Մուխթար փաշային, որպէսզի Պ. և Տիկին Քօքս ընդունուին իբր Իւր հիւրերն և անոնց տրամադրութեան ներքեւ յատուկ ապարանք մը տրուի։

Դեսպանն և դեսպանուհին հաւանաբար հինգ շաբաթէն մայրաքաղաքս կը վերադառնան։

Պուքրէշէն կը գրեն թէ սերպօ-պուլկարական խաղաղութեան կնքման համար պատուիրակաց երրորդ գումարումը տեղի ունեցեր է յունուար 15/27ի երկուշաբթին։

Մաճիտ փաշա յայտարարեր է թէ իւր պաշտօնական յանձնարարագրոց կ'սպասէ յառաջիկայ թղթատարով, ինչպէս Բ. Դրնէն տեղեկութիւն ստացած է հեռագրաւ։

Սերպիական պատուիրակ Պ. Միժաթովիչ յայտարարեր է թէ յոյժ գոհ է այս յայտարարութենէն, ըստ որում օսմ. պատուիրակին յանձնարարագրոց ի մօտոյ ժամանումն թոյլ պիտի տայ որ պաշտօնական բանակցութիւնք սկսին փութով։ Պ. Միժաթովիչ յօժարափոյթ համակերպեր է Թուրքիոյ և Պուլկարիոյ պատուիրակաց առաջարկութեան, որ էր անհատապէս կարծեաց փոխանակութեան մ'սկսիլ անմիջապէս։

Հետեւաբար, պատուիրակք որոշեր են նախապատրաստական գումարումներ ունենալ, իրենց աշխատութեանց կատարման դիւրութիւն ընծայելու համար։

Ծանուցուեցաւ արդէն թէ Ռուսիա Թուրքօ-պուլկարական Պայմանագրոյն նկատմամբ ինչ ինչ բացատրութիւններ պահանջած էր Բ. Դռնէն։ Թարիք իւր մասնաւոր տեղեկութեանց յենլով կը ծանուցանէ թէ Բ. Դուռը պահանջուած բացատրութիւններն ընդհանուր ծանուցագրով մը հաղորդած է մեծ Տէրութեանց և յայտարարած է որ Պէրլինի դաշնագրին բնաւ չպիտի դպչուի, որով կը յուսացուի թէ այս խնդրոյ նկատմամբ ամեն կնճիռ պիտի բարձուի ի մօտոյ։

Ծիւրի Մուսթաֆա փաշայի կողմէ գտնուած օսմ. զօրքերէն 10-15 վաշտ և բազմաթիւ հեծելազօրք հրաման ընդունեցեր են հելլենական սահմանագլուխն երթալ, ուր պիտի փոխադրեն նաեւ թնդանօթաց մէկ մասը։

Լոնտոնի օսմանեան դեսպան Ռիւսթէմ փաշա, անգլիական նախարարութեան փոփոխման առթիւ, հարցուցած է նոր դահլիճին թէ նախորդ նախարարութեան կողմէ Յունաստանի նկատմամբ տրուած որոշմունք պիտի փոխուի՞ն թէ ոչ։ Ասոր վրայ Պ. Կլատսթըն անմիջապէս ծանուցած է Տէրութեանց թէ այդ մասին բնաւ ո և է փոփոխում չպիտի լինի։ Նոյնպէս Կրէտէի անգլիական հիւպատոսն երէկ կուսակալ Սավա փաշայի քով երթալով յայտարարած է թէ Միջերկրականի անգլիական նաւատորմի հրամատարին այդ մասին հրահանգ տրուած է։

Կայս. Մահմուտիէ զրահաւորը մի քանի ծովամակոյկ շոգենաւներու հետ Իզմիրի կողմերն երթալով փորձեր պիտի ընէ և անտի Կրէտէ պիտի երթայ։

Աթէնքէն մայրաքաղաքս հասած հեռագրի մը նայելով, կ'ըսէ տեղական թերթ մը, այն պարագային յորում Յունաստան տեղի տալով Եւրոպիոյ կամաց, հրաժարի պատերազմէն, սոսկալի յեղափոխութիւն մը պիտի ծագի Յունաստանի բոլոր քաղաքաց մէջ, կառավարութիւնը պիտի տապալի և օտար գրաւում մը անխուսափելի պիտի լինի։

Այսու հանդերձ, կը կարծուի թէ Պ. Տէլիեանիի նախարարութիւնն հրաժարական պիտի տայ, ըստ որում Պ. Կլատսթըն կը շարունակէ պահպանողական նախարարութեան աշխարհավարութիւնը։

Նէօլօկոս կը ծանուցանէ թէ քանի մ'օրէ հետէ Եօրկիոս Թագաւորին և Կալլէսի իշխանին միջեւ անընդհատ հեռագիրք կը փոխանակուին։ Շաբաթ իրիկուն Անգլիոյ գահաժառանգ իշխանին կողմէ ծածկագիր ընդարձակ հեռագիր մը հասեր է Աթէնքի արքունիքը. կը կարծուի թէ այս հեռագիրը արեւելեան խնդրոյն կը վերաբերի։

Եօրկիոս Թագաւորը Կալլէսի իշխանին կնոջ՝ Ալեքսանդրա իշխանուհւոյն եղբայրը լինելով, երբ այն կրնայ կարծեաց պարզ փոխանակութիւն մ'ընել Ն. Բարձրութեան հետ, բայց չկարծուիր թէ ներկայ պարագայից մէջ, Կալլէսի իշխանին հեռագիրը կարենան ստանալ քաղաքական այն աստիճան նշանակութիւն մը որ հակառակ լինի Մեծին Բրիտանիոյ Սահմանադրութեան։

Աթէնքէն կը հեռագրեն առ Նէօլօկոս։

Եպիրոսի և Թեսալիոյ սահմանագլխոց վրայ յոյն զօրաց համախմբումը կը շարունակուի։ Այս իրիկուն (կիրակի) բազմաթիւ սպայք և բժիշկք յատուկ կառախմբով Լարիսա կ'ուղեւորին։ Սահմանագլխէն լուր կու տան թէ քանի մ'օրէ հետէ Թրքաց կողմէ խիստ տենդոտ շարժումներ կը նշմարուին։ Օսմանեան զօրաց քանի մը գունդեր սահմանագծին մօտեցած են։ Բարեբաղդաբար, հակառակ այն բուռն գործունէութեան որ կը տեսնուի երկու կողմէ և քաղաքական կացութեան ձգտման, օսմանեան և հելլենական յառաջապահ գունդերու յարաբերութիւնք յոյժ լաւ են և քաղաքավարական այցելութիւնք կը փոխանակուին յաճախ այդ գունդերու սպայից միջեւ։

Հակառակ Սօֆիայէն նախապէս առնուած պաշտօնական հեռագրոց որք կը ծանուցանէին թէ Պուլկարիոյ իշխանն անցեալ կիրակի Փիլիպէ պիտի հասնէր, կ'երեւի թէ Ն. Բարձրութիւն ժամանակ մ'եւս պիտի յետաձգէ իւր ուղեւորութիւնն, մինչեւ որ Բ. Դրան հետ կնքեալ պայմանագիրն աւելի լաւ ըմբռնուի յԱրեւ. Ռումէլի և Սերպիոյ հետ խաղաղութեան բանակցութիւնք յաջող ելքի մը յանգին։

Այս օրերս թեթեւ խռովութիւն մը ծագեր է Էսկի-Զաղարայի մէջ. քաղաքին աղքատ բնակիչք հաց պատրաստելու համար ալիւրի պէտք ունենալով, աղմուկ յարուցեր են, սակայն կարողութեան տէր անձինք դրամական օգնութիւն հասցնելով, առաջքն առեր են

Բազմաթիւ երիտասարդաց ի զէն կոչուիլն ևս մաս մ'ունեցած է այս խռովութեանց մէջ։

Ինչպէս յայտնի է, մինչեւ ցարդ Էսհամի, [illegible] և այլ այս կարգի արժէթղթոց տոկոսեաց վճարումն մայրաքաղաքիս մէջ Ելմտական գանձուն, իսկ գաւառաց մէջ կառավարական սնտուկներու կողմէ տեղի կ'ունենար։ Կայս. կառավարութիւնը փափաքելով կանոնաւորել այդ արժէթղթոց վճարումը, որոշած է որ թէ՛ այդ արժէթղթոց և թէ՛ տոկոսեաց արժէքը կէս առ կէս իջնեն և միանգամայն յանձնարարած է Օսմ. Կայս. Պանքային որ նոցա վճարումը տեղի ունենայ իւր միջոցաւ ի Կ. Պոլիս. բայց ըստ որում Պոլսոյ մէջ վճարելի գումարը կը հասնի 1,200,000 ղրշի, Ելմտական պաշտօնատունն, առ ի ապահովութիւն, այդ գումարի փոխարէն փոխանակագրեր պիտի յանձնէ Պանքային, մաքսատան կողմէ վճարելի։

Երէկ արդէն պաշտօնական ազդ մը կը ծանուցանէր վերոյիշեալ որոշումը։ Կը կարծենք թէ ի մօտոյ նոյնիմաստ ազդարարութիւն մ'ալ Օսմ. Կայս. Պանքայի կողմէ պիտի լինի։

Բողոքային վերաքննիչ ատեանն յառաջիկայ փետրուար 1էն սկսեալ ամեն առաւօտ ժամ 3ին պիտի բացուի և մինչեւ կէս ժամ մասնաւոր խնդրարկուք լսուելէ յետոյ հրապարակային դատավարութեանց պիտի սկսուի։ Ուստի դատ ունեցողք պարտին որոշեալ ժամուն ներկայ գտնուիլ. հակառակ պարագայի մէջ օրինաց տրամադրութիւնք ի գործ պիտի դրուին։

Աղեքսանդրիայէն կը գրեն տեղական լրագրի մը.

Սըր Հէնրի Տրըմընտ Ուոլֆ կը պատրաստուի մեկնիլ. ամեն ոք սա կարծիքը կը յայտնէ թէ անգլ. պատուիրակը լաւագոյն կ'ընէր բնաւ Եգիպտոս չգալ։

Ընդհանուր յոյս դրուած է Ղազի Ահմէտ Մուխթար փաշայի վրայ։

Թէ ի՛նչ կ'ընեն այժմ Մակեդոնիոյ պուլկար կամաւորք։ Բեշթէր Լոյդ լրագրոյն Սոֆիայի թղթակիցն՝ որ կ'ընէ այս հարցումն, հետեւեալ կերպիւ կը պատասխանէ.

Բնականաբար այդ կամաւորք չեն կըրնար իրենց երկիրները վերադառնալ, ըստ որում ուղիներն անանցանելի են ձմրան պատճառաւ։ Արդէն, շատ դիւրութիւն չպիտի ունենան անդ իրենց օրապահիկը ճարելու։ Հետեւաբար, Սոֆիա կը մնան ուր ձմրան երկար գիշերները կրնան դեռ բան մը ձեռք անցունել, և պատրաստ գտնուիլ այն պարագային եթէ գործերը վերսկսին գարնան։ Մակեդոնիոյ դիւցազունք՝ հարկ եղած պատուովք Սոֆիայի մէջ ընդունուելէ յետոյ, այժմ քաղաքին տէրերը դարձած են — գիշերները, բնականաբար։ Ցերեկները կը զուարճանան փողոցին մէջ անարգելով այն սակաւաթիւ օտարականներն՝ Աւստրիացիք կամ Հունգարացիք որք անդ մնացած են, կոչելով զանոնք «լոտես, ստահակ գերմանացի» կամ այլն։

Գիշերը կը կողոպտեն թէ՛ օտարականներն և թէ՛ իրենց Պուլկար եղբայրները. այլ ևս ապահովութիւն չկայ Սոֆիայի մէջ. և անկարգութիւնք կը բազմապատկին այն պատճառաւ որ Պուլկար կառավարութիւնն ամբողջովին չվճարեր կանոնաւոր թէ անկանոն զօրաց ռոճիկներն, այլ թերահաշիւներ միայն կը վճարէ։ Սոֆիայի շրջակայքը, մանաւանդ Փիլիպէի կողմէն, անխոհեմութիւն է շրջիլ մեծ ճանապարհներուն վրայ ուր կամաւորաց խումբեր կը վխտան գիւղերուն մէջ։ Ոմանք կը մուրան, այլք կը պահանջեն և երբեմն իսկ բռնութեամբ կ'առնուն ինչ որ կը մերժուի իրենց։ Կանոնաւոր զօրքերն ալ այս առթիւ միջոց կը փնտռեն նիւթական վիճակնին զարգացնելու համար։ Քաղաքներու զօրքերն աղքատ են. նոյնպէս և սպայք որք չեն կարող ծածկել ո՛չ իրենց ո՛չ ալ իրենց ընտանեաց չքաւորութիւնը։

ԱՇԽԱՐՀԻՍ ՇՈՒՐՋԸ

Վերջերս առիթ ունեցանք տեսակցելու անձի մը հետ որ աշխարհիս շրջանն ըրած էր և կը յայտարարէր թէ զինքն ամենէն աւելի զարմացնող բանն եղած էր ամեն երկրաց մէջ տեսնել Սինկէրի կարի մեքենայն։ Սա պարզապէս կը ցուցնէ այդ գործարանին գերազանցութիւնն, որովհետեւ ներկայ ժամանակս, երբ մրցումն ամենուրեք տարածուած է, գերընտիր պատճառներ լինելու են որ արտադրութիւն մ'ըստանայ տիեզերական համբաւ։

Կեղծէն զանազանելու համար, մեն մի մեքենայ թեւին վրայ կը կրէ. Singer Manufacturing Company։

ԱՊԱՀՈՎԱԳՐՈՒԹԻՒՆ ԱԶԳԱՅԻՆ ԿԱԼՈՒԱԾՈՑ

Այս մասին հաստատ համոզմամբ կրկնելով ինչ որ նախորդ յօդուածովս յայտարարած եմ՝ յատուկ ճնշման մը ներքեւ կը վերապահեմ առ այժմ իմ փաստեր ի պատասխանի անստորագիր պարոնի անստոյգ բացատրութեանց՝ խոստանալով եթէ Արեւելք բանայ իւր էջեր ի հիւրընկալութիւն, գրել ապահովագրութեան փափուկ գործոյն վրայ առ հասարակ։

Իմ նպատակս չէ եղած երբէք որ և է ընկերութեան մը արժանապատուութեան դպչիլ, այլ իբր ազգային անհատ՝ տեսնելով Տնտեսական խորհրդոյ հրաւէրն առ Թաղ. Խորհուրդս, ստիպուած էի ի պաշտպանութիւն ազգային շահուց յանձնարարել որ Ազգ. կալուածք ապահովագրուին առաւել վստահելի և հարուստ ընկերութեանց հետ՝ առանց ի նկատի առնլոյ գնոց ամենաչնչին տարբերութիւնն։

ԳՐԻԳՈՐ ՎԱՐԴԱՆԵԱՆ

ԱԶԴ

ՕՍՄ. ՀԱՆՐԱՅԻՆ ՊԱՐՏՈՒՑ ՎԱՐՉՈՒԹԵԱՆ

Բրիորիթէի արժէթղթոց 3րդ վիճակահանութիւնն հրապարակաւ տեղի պիտի ունենայ յառաջիկայ շաբաթ օր, 1/13 փետր. առաւօտեան ժամ 11 1/2ին, Օսմ. Կայսերական Պանքայի Պոլսոյ գրասենեկին մէջ։

ՀԵՌԱԳՐԱԼՈՒՐ

ԱԺԱՆՍ ՀԱՎԱՍ

Սոֆիա, 10 փետր.

Սերպիոյ սպառազինմանց առթիւ, Պուլկար կառավարութիւնն զգուշական միջոցներ ձեռք կ'առնու փութով անդուլութեամբ։

Լոնտոն, 11 փետր.

Երէկ երեկոյ տարածուած այն զրոյցները թէ Կրինիչի և Տէփֆօրդի պարապ գործաւորաց բազմաթիւ խումբ մը Լոնտոնի վրայ կը քալէր, չափազանցուած էին. ի բաց առեալ Լոնտոնի քանի մը թաղերու մէջ ինչ ինչ գումարումներ, որք առանց դժուարութեան ցրուեցան, ամեն ինչ հանդարտ է մայրաքաղաքին մէջ։

Լոնտոն, 11 փետր.

Արտաքին գործոց նախարար Լորտ Ռօզպէրի, երէկ ընդունելով դեսպանական մարմինն, հաստատեց թէ նոր նախարարութիւնը կը պահպանէ Սալզպըրի մարքիզին արեւելեան աշխարհավարութիւնը։

Նոր խռովութեանց երկիւղիւ երէկ երեկոյ յառաջ եկած սարսափն, որ սուտ լուրերու վրայ հիմնուած էր, այս առաւօտ հանդարտեցաւ։

Լոնտոն, 11 փետրուար

Կատարեալ հանդարտութիւն մը ցարդ կը տիրէ Լոնտոնի ամեն թաղերուն մէջ. ամեն խանութները բացուեցան և գործերը կ'ընթանան ըստ սովորականին. կառավարութիւնը կը շարունակէ զգուշական միջոցներ ձեռք առնուլ։

Փարիզ, 11 փետրուար

Պաշտօնական Օրագիրն հրամանագիր մը կը հրատարակէ, 1/2 առ % զեղչով Գանձատոմսերու տոկոսն։

Սոֆիա, 11 փետրուար

Անհիմն է այն լուր թէ Պուլկարիա որոշած է պատերազմական տուգանք մը պահանջել Սերպիայէն։

ԳՐԱՄԱԿԱՆ

ՂԱԼԱԹԻՈՅ ՊՈՐՍԱ

Ղալաթիա, 31 յունվար

ԸՆԹԱՑՔ ՓՈԽԱՆԱԿԱԳՐՈՑ

առ ի Լոնտոնի վրայ (պանքայի)	110 7/8
3 » » » (վճռկնի)	110 1/2
3 » Բարիզի » (պանքայի)	22 85
3 » » » (վճռկնի)	22 92 1/2

ԸՆԹԱՑՔ ԱՐԺԷԹՂԹՈՑ

Օսմանեան Քօնսօլիտէ

		Դահեկան
Երէկ երեկոյ գոց. (Միաց. Ծ. Սէրի Գ. Կ.		16 5
Պօրսային գոցուելէն վերջը	»	16 5
Բերայի մէջ	»	— —
Առաւօտուն բացուեցաւ	»	15 39
Բարձրագոյն գին	»	15 39
Նուաստագոյն »	»	15 37
Կէս օրին	»	15 37
Փոխառութիւն 1858) » 1862)	Ա. Սէրի Դ. Կ.	25 10
» 1860) » 1863) » 1872)	Բ. » » »	15 30
» 1865) » 1869) » 1873)	Գ. » » »	15 39

Իւնիֆիէ Եգիպտական

Երէկ իրիկուն գոցուեցաւ	71 20
Այս առտու բացուեցաւ Գ. Կ.	71 15
Կէս օրին	71 15

ԵՒՐՈՊԱԿԱՆ ՊՈՐՍԱ

Լոնտոն, 11 փետրուար, ժամ 5 վայր. 15 երեկոյ

Անգլ. Քօնսօլիտէ	100 9/16
Օսմ. » Սէրի Դ. բացուեցաւ	14 5/8
» » » գոցուեցաւ	14 5/8
» » » Ա.	25 1/4
» » » Բ.	16
» » » Գ.	14 5/8
Օթօման 1871	67 1/4
Փոխառութիւն 1877	80
Պանք Օթօման	9 1/2
Ռուսական փոխառ. 1873	97 7/8
Եգիպտական միացեալ (իւնիֆիէ)	64 1/2
» առանձն. (բրիվիլէժիէ)	88 3/4
Տայրա Սանիէ	52 1/4
Տօմանիալ (փոխառ. Րօշիլտ)	89
Հունգարական պարտաթուղթ 4%	— —
Փոխանակութիւն Բարիզի վրայ	— —

Վիէննա, 11 փետրուար, ժամ 4 երեկոյ

Փոխանակութիւն Լոնտոնի վրայ	126 80
Օսմանեան երկաթուղի	17 70

Բարիզ, 11 փետրուար, ժամ 3 վայր. 45 երեկոյ

Ֆրանսական Ռանթ 4 1/2 %	109 25
» » 3 %	81 45
Օսմանեան Քօնսօլիտէ Սէրի Դ. բացուեցաւ	14 72 1/2
» » » գոցուեցաւ	14 67 1/2
» » Սէրի Բ.	15 50
» » Գ.	14 60
Օսմանեան երկաթուղի	35 25
» Րէժիի բաժնեթուղթք	— —
Պանք Օթօման	490
Գրէտի Լիոնէ	517 50
» Ֆոնսիէ	1335
Բաժնեմասն Լիոնի	1251 25 (*)
Սուէզի ջրանցք	2158 75
Ռուսական 5% 1877ի	100 1/2
Իտալական Ռանթ	97 45
Եգիպտական միացեալ	325
Սպանիական (արտաքին)	—
Բրիորիթէ Թիւրք	358 75
5% Հելլենական	271 25
Չէք Լոնտոնի վրայ	25 18

ԲԱՐԻԶ ԲԹԻԹ ՊՈՒՐՍ

Բարիզ, 11 փետրուար, ժ. 10 վ. 30 երեկոյ

Ֆրանսական Ռանթ 4 1/2 %	109 15
Օսմանեան Քօնսօլիտէ Սէրի Դ	14 55
Եգիպտական	325

ՆԱՄԱԿ ԱՌ ԽՄԲԱԳՐՈՒԹԻՒՆ

ԱՌԱՋԱՐԿ ՄԸ

Ձեր 616 թիւ լրագրոյ Ազգային տեսութեան մէջ «Օրէնք և օրինաւորութիւն» վերնագրով հրատարակեալ յօդուածը մեծաւ շնորհակալութեամբ կարդացի։

Արդարեւ թէ՛ սա և թէ՛ այլուր ես եւս շատ անգամ լսած, տեսած և զգացած էի պետական օրինաց թարգմանութեան կարեւորութիւնը։

Եթէ պետական օրինաց ամբողջական թարգմանութիւնն անկարելի է սուղ ժամանակի մէջ կատարել, և եթէ այդպիսի թարգմանութեան մը ծախուց համար անհրաժեշտ նկատուած կարեւոր գումարին չգոյութիւնը երկրորդ և թերեւս գլխաւոր արգելք մ'է բաղձացեալ նպատակին իրականացման, կը կարծենք թէ Տիւսթուրի այլեւայլ մասանց առանձին թարգմանութիւնք կը նպաստեն մեծապէս առաջադրուած գործին գէթ մասնակի յաջողութեան։

Արդէն այսպիսի ձեռնարկութիւն մ'ըրած է Մեծ. Վահրամ էֆ. Տատեան, պատժական դատավարութեան օրինաց առաջին 154 յօդուածոց թարգմանութեամբ (այժմ ընդհատեալ մեզ անծանօթ պատճառներով)։

Ապահով եմ որ օրինաց կատարեալ թարգմանութիւնը սոյն եղանակաւ հետզհետէ կարելի է ի գլուխ հանել, քանզի ինչ որ սուղ ժամանակի մէջ կաճառ մը ձեռօք լիովին կատարել դժուար է, կրնայ երկար ժամանակի մը մէջ այլեւայլ անձանց ձեռօք մաս առ մաս հեշտ դառնալ։

Նուաստս առանց ո և է շահախնդրութեան հրապարակաւ կը խոստանամ օսմանեան իրաւագիտութեան հիմնական կանոնաց կարեւորագոյն մասը կազմող «Մէճէլլէ»ն թէ՛ սոսկ հայատառ և թէ՛ հայատառ ու հայաբարբառ թարգմանել և այդ թարգմանութեանց մին Ազգ. Հիւանդանոցի և միւսը Միացեալ ընկերութեան նուիրել, այն պայմանաւ որ տպագրական ծախքը Հիւանդանոցի հոգաբարձութեան և Ընկերութեան ձեռնհաս ժողովոյն կողմանէ պէտք է հոգացուի. գոյացած արդիւնքէն չնչին մաս մ'իսկ չընդունելով իւրաքանչիւրին կէսը այն բարեսիրական հաստատութեանց կը թողում և միացեալ կէսը դարձեալ իրենց պաշտօնէից միջոցաւ ուղղակի Ա. . . ու մէջ հաստատեալ Ա. . . Ընկերութեան Որբանոցին խրկել տալու իրաւունքը կը վերապահեմ։

Այս առաջարկի պատասխաններն թէ հրապարակաւ և թէ մասնաւոր գրութեամբ ընդունելու պատրաստ եմ. բայց քանի որ այդ Մատենի թարգմանութիւնն իւր սեռին մէջ յանդուգն ձեռնարկ մը կրնայ համարիլ, թէ հետաքրքիրները գոհացնելու և թէ ծախքը հոգացողներուն վստահութիւնն ստանալու համար, սոյն օրինագրքի ընդարձակ տեղեկագրոյն և իրաւաբանական 99 առածներու հայերէն թարգմանութիւնն որ այժմ ի ձեռին կը գտնուի, պատմական ինչ ինչ տեղեկութեանց յաւելմամբ և իւր անհրաժեշտ թերութեամբ, կրնամ Արեւելքի խմբագրութեան մատուցանել ի հրատարակութիւն։

Ն. Հ.

1886 յունվար 30 Կ. Պոլիս

ԷՎԳԱՖԸ ՀԻՒՄԱՅՈՒՆ

Էվգաֆը Հիւմայունի վարիտաթը ումումիյէ խարէճինտէ պէնտէր կիւն միւզայէտէլէրի իճրա օլունմագտա օլան աթիւլզիքր մահլիւլաթըն մուայեէն օլան 4 հաֆթա միւտտէթի [illegible] լիճնէի հաֆթայը օլան իշպու 1301 սէնէսի քեանունը սանիսինին 20ինճի բազար էրթէսի կիւնինտէն իթիպարէն 1 հաֆթա զարֆընտա թալիպ օլանլարըն դըյմէթը մուխամմինէսինին խօշիւրինէ միւսավի թէէմինաթ աքչէսի իլէ պէրապէր խարէճի միւզայէտէյէ միւրաճաաթ էթմէլէրի լազըմ կէլէճէյի [illegible] օլարագ իլան օլունուր։

• 113 • 11562 • — Քիւչիւք Լանկասա Քիւրքճի պաշը մահալլէսինտէ Քիւչիւք Լանկա ճատտէսինտէ Թէրպիէն 9000 մէթրօ արսատէ 2 օտա վէ 1 սօֆա վէ 1 գույու վէ 1 հավուզը միւշթէմիլ վէ սէնէվի 6000 ղրշ. քիրալը հարէմէյն կէտիքեաթընտան կէտիկնին 8 հիսսէտէն 1 1/2 հիսսէսի։

• 10 • 17500 • — Շէհզատէ պաշը դուրպինտէ Մօլլա խիւսրէվ մահալլէսինտէ Ճիւճէ չէշմէսի ճատտէսինտէ Թէրպիէն 212 մէթրօ արսատէ 8 օտա վէ 3 սօֆա վէ 3 գույու վէ 700 մէթրօ պաղչէյի միւշթէմիլ Սէքպան Գարա Ալի պէյ վագֆընտան չէհրի 80 ղրշ. քիրալը 1 պապ մէնզիլին նըսֆ հիսսէսի իլէ մէնզիլի մէզքիւրըն տէրունինտէ ճարի նըսֆ մասուրա մաի լէզիզ։

• 3 • 800 — Սէմավրօզ գարիյէսինտէ Թէքքէ սօգագընտա Թէրպիէն 90 մէթրօ Աթիւլ Քէրիմ էֆէնտի վագֆընտան 1 գըթա մէնզիլ արսասը։

• 140 • 142 • 3250 • — Սալմաթօմրուգտա Խէվաճէ Գասըմ կիւնանի մահալլէսինտէ Սալմաթօմրուգ ճատտէսինտէ Թէրպիէն 114 մէթրօ արսատէ 4 օտա վէ գահէրխանէ 90 մէթրօ պաղչէյի միւշթէմիլ Բէյալի Ահմէտ էֆէնտի վագֆընտան 1 պապ տուքեանը միւլքի իլէ վէ չէհրի 80 ղրշ. քիրալը պիլա կէտիք ախչապ 1 պապ ախօրըն նըսֆ հիսսէսի։

• 130 • 15000 • — Գանթարճըլարտա Խօճա Թիմուր մահալլէսինտէ Գըլըճ չէշմէսի ճատտէսինտէ Թէրպիէն 11 մէթրօ արսատէ չէհրի չէհրի 100 ղրշ. քիրալը քեարկիր Բաբաղ զատէ Մուսթաֆա էֆէնտի վագֆընտան 1 պապ Թէնեքէճի տիւքեանը։

• 85 • 4160 • — Պալը Ճաֆէրտէ Ռիւսթէմ բաշա մահալլէսինտէ Խասըրճըլար ճատտէսինտէ Թէրպիէն 28 մէթրօ արսատէ չէհրի 160 ղրշ. քիրալը Այասօֆիաի քէպիր վագֆընտան պիլա կէտիք 1 պապ տուքեանը տիւքեանլընըն 6 հիսսէտէն 1 հիսսէսի։

• 25 • 12000 • — Թօթմավլատա Եէնիչէհիր Նամ մահալլէ Պէօյիւք Ագարճա Թէրպիէն 76 մէթրօ արսատէ 3 օտա վէ 2 սօֆա վէ 1 գույու վէ 30 զըրա պաղչէյի միւշթէմիլ չէհրի 100 ղրշ. քիրալը միւթէհամմիլ ախչապ վէ Հասան Րիզա բաշա վագֆընտան 1 պապ մէնզիլ։

• 38 • 5332 • — Պէյքօզ գարիյէսինտէ Չէշմէ սօգագընտա Թէրպիէն 90 մէթրօ արսատէ 4 օտա վէ 1 սօֆա վէ 1 գույու վէ 22 մէթրօ պաղչէյի Նէյլի Ահմէտ էֆէնտի վագֆընտան 1 պապ մէնզիլին 6 հիսսէտէն 4 հիսսէսի։

• 1 • 10 • 20000 • — Սուլթան Պայազիտտէ Էմին պէյ մահալլէսինտէ Եօլ կէչէն խանը տէրունինտէ 1տէն 11 նումէրօյա վարընճայա գատար չէհրի 600 ղրշ. քիրալը 10 պապ օտա վէ 1 պապ օտանըն նըսֆ հավասը վէ խանճըլըգ օտա պաշըլըղըն վէ էվգաֆ կէտիքլէրինտէն Թահթընտա [illegible] վէ գահվէ տիւքեաներինին նըսֆ հիսսէսի։

• 73 • 6660 • — Կալաթատա Սուլթան Պայազիտ մահալլէսինտէ Գըլըճ Ալի բաշա ճատտէսինտէ Թէրպիէն 60 մէթրօ արսատէ Փէվգինտէ 3 օտա վէ 1 գույուը միւշթէմիլ չէհրի 30 ղրշ. քիրալը Տայէ խաթունի վագֆընտան միւլքի վէ էվգաֆ կէտիքեաթընտան կէտիկնին 120 սէհմտէն 10 սէհմի հիսսէսի իլէ միւլքին 12 հիսսէտէն 1 հիսսէսի։

• 255 • 6000 • — Մահմուտ բաշատա Մահմուտ բաշա ճատտէսինտէ չէհրի 80 ղրշ. քիրալը Եըլտըզ խանը օտապաշըլըղընըն սիւլիւս հիսսէսի։

• 4 • 6 • 8 • 7500 • — Գարանը տագիգտէ Խարաճճը Գարա Մէհմէտ պէյ մահալլէսինտէ Հիսար ալթը սօգագընտա Թէրպիէն 60 մէթրօ արսատէ վէ Փէվգինտէ 4 պապ պէքեար օտա Թահթընտա 2 պապ տէքքեաքեանին 1 գըթա Թէմէսսիւք միւճիպինճէ 45 զըրա մահալլինտէ 3 բուպ հիսսէսի իլէ 1 գըթա Թէմէսսիւք միւճիպինճէ [illegible] 73 զըրա մահալ օլան տիւքեանի վէ [illegible] զըրաի [illegible]։

• 14 • 500 • — Էյրի գարուտա Ֆէթհի չէլէպի մահալլէսինտէ Թօգմագ Թէբէ ճատտէսինտէ Թէրպիէն 350 ղրշ. քիրալը տէրունինտէ 1 գույույը միւշթէմիլ 1 գըթա մէնզիլ արսասը։

• 82 • 48 • 35,000 • — Քիւչիւք բազարտա Խէվաճէ Խայրէտտին մահալլէսինտէ Գազանճըլար սօգագընտա Թէրպիէն 90 մէթրօ արսատէ վէ գահէրխանէ 30 մէթրօ պաղչէյի միւշթէմիլ չէհրի 480 ղրշ. քիրալը 1 պապ ախչապ պէքեար վէ ըխնէճի տիւքեանլէրինին Խաֆաֆ Շէմսէտտին էֆէնտի վագֆընտան պիւթիւնի։

• 18 • 4000 • — Քիւչիւք բազարտա Նավուգ Արսլան մահալլէսինտէ Թիրպէ սօ

ՖԷՆԻՔՍ PHOENIX FIRE OFFICE

ԱՆԳԼԻԱԿԱՆ ԱՊԱՀՈՎԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹԻՒՆ

ԸՆԴԴԷՄ ՀՐԴԵՀԻ

ՏԱՐԵԿԱՆ ՄՐՑԱՆԱԿՆԵՐԸ Կ'ԱՆՑՆԻՆ 900,000 Անգլ. Ոսկի, ՊԱՀԵՍՏԻ ԴՐԱՄ՝ ԱՒԵԼԻ ՔԱՆ 1,000,000 Անգլ. Ոսկի

ՎՆԱՍ ՎՃԱՐԵԱԼ ՄԻՆՉԵՒ յ31 Դեկտեմբեր 1885 14,000,000 Անգլ. Ոսկի

ՀԻՄՆԵԱԼ Ի ԼՈՆՏՈՆ 1782ԻՆ

ՖԷՆԻՔՍ իւր տէրանց մէջ ունի Անգլիոյ ամենէն հարուստ և հանրածանօթ դրամատէրքն, այսու ընծայելով անհակառակելի ապահովութիւն իւր յաճախորդաց։ Ապահովագրութիւն ընդդէմ հրդեհի ամեն տեսակ անշարժ կալուածոց, կարասեաց և ապրանաց վրայ, ի Պոլիս և յարուարձանս, կատարեալք ձեռամբ ստորագրելոյս որք լիակատար զօրութիւն ունին անմիջապէս և առատաձեռնութեամբ կարգադրելու վնասներն և կորուստներն։

Թիւ 8 Մէհմէտ Ալի փաշա խան, Ղալաթիա

Գործակատարք ՔԼՈՆԱՐԻՏԻՍ ԵՒ ԸՆԿ.

ՀՐԴԵՀԻ ԹՇՆԱՄԻՆ

Բացարձակ ապահովութիւն վանեցնելոյ հրդեհները, շնորհիւ ՀԷՅՍՈՒՈՐՏ ի կատարելագործեալ կրքնամներու որք ձեռքով կը գործածուին։

Գործածելու եղանակ, Շիշը կրակին վրայ նետեցէք այնպէս որ կոտրի. Դուրս ելնող կազն անմիջապէս կրակը կը մարէ բոցերը։

Հարիւրաւոր հրդեհներ այսպէս մարած են շնորհիւ այս կրքնամներուն։

Յոյժ շահաւէտ պայմաններ ու չափաւոր գիներ։

ՄԹԵՐԱՆՈՑ ի Մէհմէտ Ալի փաշա խան, Թիւ 8 և Զագ մազճըլար Եօգուշու, Թիւ 35

գաղընտա Թէրպիէն 30 մէթրօ արատէ ախչապ 1 պապ ախըրըն Խաֆֆաֆ Շէմսէտտին էֆէնտի վաղֆընտան պիւթիւնի։

· 119—75000 · — Քիւչիւք Լանկատա կիւրիւքճի պաշը մահալլէսինտէ Քիւչիւք Լանկա ճատտէսինտէ Թէրպիէն 9000 մէթրօ իւրուպատէ 2 օտա վէ 1 գույու վէ 1 ախըրը միւշթէմիլ Հարէմէյն կէտիկեաթընտան 1 գըթա պօսթանըն նըսֆ հիսսէսի։

· 35 · 41 · 45 · 47 · 16,666 — Թօփխանէ Թօմթօմ մահալլէսինտէ Եէնի չարշը քէճատտէսինտէ Թէրպիէն 490 զիրա արատէ [illegible] գատըն վաղֆընտան պիւթիւնի մէթթասըլ վէ չէհրի 650 զիրա քիրալը 6 պապ տէքքեաքիւնին 6 հիսսէտէն 1 հիսսէսի։

---

(1) Ծիւմէյլէրին պաշլարընտաքի ճիզատա պուլունան րագգամլար մանզիլայթըն [illegible] ճիզատա պուլունանլար [illegible] պէտէլի պիլմիւզայէտէ կէտիկլէրինի [illegible]։

ԻԼԱՆ

ՇԷՀԻՐ ԷՄԱՆԷԹԻ

Պէօյիւքտէրէ չայիրի գուրպինտէ [illegible] մէթրուգ Թարիգտէն հասըլ վէ խազինէի պէլէտիյէյէ պիր օլան խուղալթ- [illegible] Թէրպիինտէ արսա խըրտէ կոյէշ խուղլիւք ալթընը պէտէլ իլէ պազարլը Թալիպի [illegible] օլսա [illegible] գարարը գաթիի վէրիլէճէյինտէն, չէֆիլէրինտէն վէ սայիրէտէն Թալիպ օլանլարըն Թէէմինաթ աքչէլէրի վէ եա միւթէպէր քէֆիլլէրի իլէ միւտէթի մէզքիւրէ զարֆընտա Շէհիր Էմանէթի մէճլիսինէ կէլմէլէրի իլան օլունուր։

29 քեանունը սանի 301

1—2

ԻԼԱՆ

ՇԷՀԻՐ ԷՄԱՆԷԹԻ

Քեաղըթխանէ սու մաքինալարը իչին իչ խիւզ իքի սէնէլինէ մաճունաթըն լուզումի օլան պին սէքիզ Թօն քէօմիւրիւն միւպայաասը մունագասայա գօնուլուպ, գարարը գաթիի չուլամէն պէշինճի ճումա իրթէսի կիւնի վէրիլէճէյինտէն, իթայա Թալիպ օլանլարըն Թէմինաթ աքչէլէրի վէ եախօտ միւթէպէր քէֆիլլէրի իլէ պէրապէր Շէհիր Էմանէթի մէճլիսինէ կէլմէլէրի իլան օլունուր։

29 քեանունը սանի 301

ԻԼԱՆ

ՊԱՊԸ ՍԷՐԱՍՔԷՐԻ

Ալասոնիա ճիֆթլիկինտէ վէ միւլհագ պիւլիւքլէրտէ պուլունան ճէնկէլ ճէնկէլ Հիւմայունունտա պին իքի խիւզ պիր սէնէսի մարթը իպթիտասընտան լիթրիպարէն չուպուգ նըսֆ խէճիտէն գահ [illegible] լուզումի օլան յաքմըն չէրայիթի մունագասայա գօնուլուպ [illegible] պէշինճի [illegible] Թէմինաթ աքչէսի պին իքի խիւզ պիր սէնէսի չուպաթըն պիրինճի պազար կիւնի [illegible] Թալիպ օլանլարըն [illegible] մը սէրասքէրի [illegible] կէլմէլէրի իլան օլունուր։

2—3

29 քեանունի սանի 1886

ՀԱՅ ԹԷՅԱՎԱՃԱՌՆ

Կը վաճառէ ամեն տեսակ ընտիր Թէյեր։ Ամէն յաճախորդք որ դիմեն Թահմիզ փողոց Թիւ 70 (Մըսըր Չարշըլը կից, աղբիւրին վերի կողմը) գոհ պիտի լինին իրենց ստացած Թէյերուն թէ՛ տեսակէն և թէ՛ գնէն։

ԿԵԱՆՔ, ԱՃՈՒՄՆ Է ԳԵՂ ՄԱԶԵՐՈՒ։

ՄԻԼՐՕԶ

ՄԱԶԵՐՈՒ ՄԻԱԿ ՀԱՏԻԿ ՆՈՐՈԳԻՉ

Իրապէս իրենց առջի Թարմ գոյնին կը դարձունէ ճերմկած կամ գունաթափ մազերը. Կը դադրեցունէ անոնց Թափելը. Կը մաքրէ գլուխը, կը վերջացունէ Թեփը, ու մազերուն նոր կեանք, աճումն, փայլ ու գեղեցկութիւն կուտայ։

Կը վաճառուի երկու չափով՝ մեծ շիշերու մէջ։

Գլխաւոր մթերանոցը Լոնտոն է (114 and 116, Southampton Row). Նոյնպէս Բարիզ ու Նիւ Եօրք։

Կը գտնուի Ն. և Ժ. Գանզիւք եղբարց բրիտանական դեղարանն, Բերա, Մեծ փողոց. Եսմէրն Դարուանա, Անգլիական մթերանոց, Եււ. քաք Գալաթըրմ. և Իզլիսոր Լագանտէլլա, 433, Բերա Մեծ փողոց։

ՆՈՐՏՏՈՅՉԻ

ՀՐԴԵՀԻ ԵՒ ԼՄ

ԱՊԱՀՈՎԱԳՐԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹԻՒՆ Ի ՀԱՄԲՈՒՐԿ

Յիշեալ ընկերութիւնն հրդեհի դէմ կ'ապահովագրէ տուներ, կարասիներ, խանութներ և ապրանքներ յոյժ շահաւէտ պայմաններով, միջնորդութեամբ իւր ընդհանուր գործակալութեան։

ՇԻՆՏԼԷՐ ԵՒ ԱՍՏՈՒԱԾԱՏՈՒՐ

Կ. ՊՈԼԻՍ, ՊԱՀՉԷ-ԳԱՊՈՒ, ՃԷԼԱԼ ՊԷՅ ԽԱՆ

50

32 ՄԱՀՄՈՒՏԻՒ ՓՈՂՈՑ

ԿՐԱԿԱՐԱՆՆԵՔ

[illegible]



Միակ մթերանոց վի- [illegible]

ՀԵՆՐԻԿ ԼԱՆԺ

ԽՈՀԱՆՈՑԻ ԳՈՐԾԻՆԵՐ

(ՊՂՆՁԷ, ՁՈՒԼԱԾՈՅ ԵՒ ԹԱՓԾՈՅ ԵՐԿԱԹԷ)

ԵՐԿԱԹԵԱՅ ՄԱՆՐ ԳՈՐԾԻՔ

ԱՏԱՂՁԱԳՈՐԾԻ ԳՈՐԾԻՔ

ՇԻՆՈՒԹԵԱՆ ԱՌԱՐԿԱՅՔ

ՆՈՐՈԳՈՒԹԵԱՆ ԳՈՐԾԱՆՈՑ

ԵՐԿՐԱԳՈՐԾԱԿԱՆ ՄԵՔԵՆԱՅՔ

ԴԱՆԱԿՆԵՐ

ՔՐԻՍԹՈՖԼԷ ՈՍԿԵՐԶԱԿԱՆ ԳՈՐԾԵՐ

24 [illegible]

(ՇԱՔԱՐՈՎ ՊԱՏԱԾ)

ՀԷՅՏՈՔԻ

ՆՈՐ ՓԱՅԾԵՂՆԻ ԴԵՂԱՀԱՏՆԵՐ

Աւասիկ ընդհանուր բժշկութեան զարմանալի և արտակարգ գիւտ մը։ Գիտութեան յաղթանակները —Ելեկտրական հեռագիրք, Շոգի, Տպագրութիւն— յեղափոխեցին երկրագնդիս դրութիւնը, և մարդկային կեանքն ըրին լաւագոյն և իմաստնագոյն։ Այսպէս, Թէպէտ անհամար Դեղահատներ կան հիւանդութեանց համար, և մեծ արժանիք վերագրելով հանդերձ անոնց, Տոքթոր Հէյտոքի գիւտը նսեմացուցած է անոնց ամենքն և հիմնած է

ԲԺՇԿԱԿԱՆ ՆՈՐ ԴՐՈՒԹԻՒՆ ՄԸ

Բժիշկք, որոց պատուիրած օրական չորս կամ հինգ դեղահատները կը տկարացնեն ստամոքսը եւ կ'անդամալուծեն աղիքները, պիտի կրնան իրենց հիւանդաց առողջութիւն և ախորժակ տալ այս արտակարգ Դեղահատներէն մէկ երկուքով։ ՏՈՔԹՈՐ ՀԷՅՏՈՔԻ ՆՈՐ ՓԱՅԾԵՂՆԻ ԴԵՂԱՀԱՏՆԵՐԷՆ մէկ երկու հատը կը բաւեն գնելու համար ստամոքսն կատարեալ կանոնաւորութեան և ախորժակի մէջ, և միտքն պայծառ ու Թեթեւ ընելու։ Եթէ փայծեղը տկարացած է իւր գործին մէջ, կը կազդուրի, և եթէ Ջղային դրութիւնը խանգարուած է, կը վերականգնուի։

ՄԱՂՁՈՏՈՒԹԵԱՆ ՆՇԱՆՔ

1. Ստամոքսի ծանրութիւն։
2. Աղեաց տարածումն փքախտի պատճառաւ։
3. Սրտաշաւութիւն,
4. Ճաշէն յետոյ տկարութիւն և յոգնութիւն։
5. Բերնին մէջ գէշ համ մը և ծանր լեզու։
6. Որովայնի պնդութիւն, մերթ ընդ մերթ ալ փորհարութիւն.
7. Գլխու ցաւ ճակտի վրայ։
8. Անորոշակի պակասութիւն և մեծ յոգնութիւն.



Վերոյիշեալ ամեն նշանները բացորոշապէս ցոյց կուտան թէ խանգարում յառաջ եկած է փայծեղնի մէջ, եւ պէտք է յիշել թէ մեծ կարեւորութիւն ունի սխալ կերպիւ չըմբռնել հիւանդին ճիշդ կացութիւնը։ Պէտք է անմիջապէս

ՓԱՅԾԵՂՆԻ ԿԱԶԴՈՒՐԻՉ մը հայթայթել, որ դեղահատի մը ամենէն սովորական ձեւն է։ Ամենօրեայ փորձառութիւնը ցոյց կուտայ թէ եթէ դեղահատը լաւ կերպիւ բաղադրեալ է, ամենայարմար կերպիւ կրնայ վերանորոգել փայծեղնի գործողութիւնը, և այդ մասին կարելի է միշտ վստահութիւն ունենալ։ Իմ կենացս բազմաթիւ տարիները նուիրած եմ շինելու համար Դեղահատ մը որ լինի անմիջական և ազդու դարման մը ընդդէմ մաղձոտութեան։ Մեծ հաւատ չունիմ լուծողական դեղերու վրայ, ուստի եւ շինեցի Դեղահատ մը որ զօրաւոր եւ ազդու դարման մ'է, եւ կոչեցի

ՀԷՅՏՈՔԻ ՆՈՐ ՓԱՅԾԵՂՆԻ ԴԵՂԱՀԱՏ

Առողջութեան խոկութիւնն իսկ են, եւ այն մեծագոյն շնորհն զոր Գիտութիւնն ըրած է մարդկութեան։

Ջղախտութեան, Անզօրութեան, Ընդհանուր յոգնութեան, ախորժակի պակասութեան, Գլխացաւութեան համար, Տոքթոր Հէյտոքի Նոր փայծեղնի դեղահատներն ամենազդու դարմանն են։

Մէկն մի սրուակ կը պարունակէ քսան դեղահատ։ Կը ծախուի ամեն դեղավաճառաց քով։–

Տարակուսող անձինք կրնան, փորձի համար, ՁՐԻԱԲԱՐ ստանալ այս Դեղահատներէն սրուակ մը, եթէ մեզ գրեն իրենց անունն եւ հասցէն։

Թղթատարական տոմս մը ղրկել «փայծեղնն եւ իւր գաղտնիքը» խորագրով տետրակին։ Հարկ եղած տեղեկութիւնները կը տրուի ամենուն։

ՀԷՅՏՈՔ ԵՒ ԸՆԿ.
Նիւ-Եորք, Մ. Ն.

Կը ծախուի ի Ղալաթիա, Գասթօրիատէսի դեղարանը, ի Պոլիս Քիւչիւքեան դեղավաճառանոցն և Նէգիքի։

ԶԳՈՒՇՈՒԹԻՒ՛Ն —Կը խնդրուի դեղավաճառներէն ուշադրութիւն ընել որ Ճ. Հ. Ֆրանսիսի, որ միակ Գործակատարն է, ստորագրութիւնը գրուած լինի։ Հակառակ պարագայի մէջ, դեղահատները կեղծ են։

Յ. ՄԱՏԹԷՈՍԵԱՆ

ԿԱԶՄԱՏՈՒՆ

Ի ՓԱՑՔԱԼ ՀԱՌՋ

ՖԻՆ ԱՆՃԸԼԱՐ ԵՕԳՈՒՇՈՒ Կ. ՊՈԼԻՍ

Սոյն կազմատան մէջ ամէն տեսակ գիրքեր և տումարներ կը կազմուին չափաւոր գիներով։ Կազմատունը ունի Եւրոպական ընտիր գործիներ նորագոյն կատարելութեամբ շինուած, և կարող է ամեն տեսակ գիրքեր պատրաստել յոյժ ընտիր և հաստատուն կազմով։

ՔԻՒՆԱՐՏ

ՇՈԳԵՆԱՒԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹԵԱՆ

ԱՌԱՋԻՆ ԿԱՐԳԻ ՇՈԳԵՆԱՒՔ

Որք ամեն տասն օրը մէյ կը բանին Լիվէրպուլի և Միջերկրականի միջև.

Անուանք	Թոնոյ	Անուանք	Թոնոյ
Ագլաա	3,000	Մալթա	3,000
Ալէփփօ	3,000	Մորոքքօ	2,500
Պալպէք	2,500	Նանթ	2,500
Պրիթիշ Քուին	1,200	Պալմիրա	3,000
Շէրպուրկ	2,000	Սիտոն	4,600
Տէմէրարա	2,500	Սարակօսա	3,000
Կալլիա	4,000	Սամարիա	3,000
Քէտար	2,500	Թրինիտատ	2,500

Մալթա շոգենաւը, նաւապետ Լէվիս, Լիվրբուլէն աստ հասաւ և ի մօտոյ վերստին Լիվրբուլ կը մեկնի Զմիւռնիոյ ճանբով։

Քէտար շոգենաւը, նաւապետ Ֆէրկիւսըն, ամսոյս 10ին Լիվրբուլէն աստ կ'սպասուի ընդհանուր վաճառքով։

Դիմել առ ԹՈՄԱՍ Ջ. ՃՕԼԻ
Գործակատար
Թիւ 1 Քիւչիւք Հաիլի փաշա խան Ղալաթա

511

ՊԱՊԱԵԱՆԻ

ՇՈԳԵՆԱՒԱՑԻՆ ԸՆԿԵՐՈՒԹԵԱՆ

Լիվէրպուլի, Միջերկրականի և Օտեսայի միջև կանոնաւորապէս բանող

Անուանք	Թոնոյ	Նաւապետք
Այա Սօֆիա	3,000	Գլէգ
Արգատիա	2,500	Ռոճըրս
Ալպանիա	2,500	Քրուքշանք
Լաքոնիա	2,500	Ռէիտ
Մաքէտոնիա	3,500	Մարշ
Թեսալիա	2,800	Ֆօթըրկիլ

Բոլմ շոգենաւը, նաւապետ Ռասթինկդըն, փետրուար 12ին Պաթումէն աստ դառնալով Լիվրբուլ պիտի ուղեւորի։

Արգատիա շոգենաւը, փետրուար 7ին Լիվրբուլէն աստ կ'սպասուի։

Ընկերութիւնն օրինաւոր գներով վաճառք կ'ընդունի Եւրոպական երկիրներու և Ամերիկայի համար։

Ամեն դիւրութիւն և հանգստութիւն կը տրուին ուղեւորաց։

Դիմել առ ԴԱՆԻԷԼ ԲԱԲՕ ԵՒ ԸՆԿ.
Գործակալ

513

ՄՈՍ

ՇՈԳԵՆԱՒԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹԵԱՆ

Լիվէրպուլի և Միջերկրականի միջև բանող շոգենաւք

Անուանք	Թոնոյ	Անուանք	Թոնոյ
Քանոբուս	4200	Օսայրիս	3000
Ֆէրոս	4000	Նեֆթիս	3000
Օսմանլի	4000	Բերա	3000
Սեսոստրիս	3250	[illegible]	1700
Թիպս	3250	Լոտիւս	800
Մեմֆիս	3250	Օլինտա	800
Մարիօթիս	3250	Մեսիր	700
Սֆինքս	3000		

[illegible] շոգենաւը, նաւապետ Յօքնէլ, Լիվրբուլէն աստ հասաւ ընդհանուր վաճառքով։

Թիպս շոգենաւը, նաւապետ Տրֆֆի, ամսոյս դէպի 10ին, ուղղակի Լիվրբուլ պիտի երթայ։

Դիմել առ Ժ. Թ. ՈՒԻԹՈԼ Է ԸՆԿ.
Մէյտանճըգ փողոց,
Ուիթոլ խան
ՃԷՅՄՍ ՄՈՍ Է ԸՆԿ
31, Ճէյմս Սթրիթ, Լիվրբուլ

515

ՖՐԷՏ. ԼԷՅԼԱՆՏ

ՇՈԳԵՆԱՒԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹԵԱՆ

ԱՌԱՋԻՆ ԿԱՐԳԻ ՇՈԳԵՆԱՒՔ

Որք կանոնաւորապէս կը բանին Լիվէրպուլի և Սեւ-ծովու միջև.

Անուանք	Թոնոյ	Անուանք	Թոնոյ
Ալճէրիան	2500	Ֆավոնեան	3700
Ալզաշիան	2500	Ֆլամինեան	3700
Անտալուզեան	2500	Ֆլավեան	3700
Աթենեան	2500	Իպէրիան	5500
Արաբիան	3700	Իլլիրիան	5500
Բավարիան	6000	Իտալիան	5500
Բուլկարիան	6000	Լեսպիան	2200
Քասթիլեան	800	Լիկուրեան	2500
Սայրենեան	2000	Լիզպոն	800
Տալրոյ	700	Օփօրթօ	700
Եճիփշըն	3700	Բէրսիան	3800
Ֆապիան	3700	Վալենսիան	6800
Ֆալէրնիան	3700	Վիրճինեան	6800

Լեսպեան շոգենաւը, նաւապետ Պօլ, զանազան վաճառքով ամսոյս 18ին աստ կ'սպասուի։

Ուղեւորներու համար ամեն դիւրութիւն

Աւելի մանրամասնութեանց համար դիմել առ ԷՏՈՒԱՐՏ ԼԱՖՈՆԹԷՆ
Գործակալ
Թիւ 34, 35, 36, Եէնի Միլլէթ խան, Ղալաթիա.

Նաւատէրք, Պարոնայք Ֆրէտ, Լէյլանտ և ընկ. Լիվրբուլ

Գործակալութիւնք

Կ. Պոլիս, Էտուարտ Լաֆոնթէն.
Ճիպրալթար, Պ. Պ. Քարվըր Եղբարք
Ալեքսանդրիա, Կ. Լ. Վանման և ընկ.
Մալթա, Ա. Քամիլըրի.
Շիրա, Ա. Մ. Մավրօկօրտատոյ.
Զմիւռնիա, Պ. Ուիթօլ և ընկ.

512

ԵՐԹԵՒԵԿՈՒԹԻՒՆ

ԱՌԱՋԻՆ ԿԱՐԳԻ ՇՈԳԵՆԱՒՈՒՔ

Որք կը մեկնին Կ. Պոլսէն և Օտեսայէն

ԹՈՎՄԱՍ ՈՒԻԼՍԸՆ ՈՐԴԻՔ ԵՒ ԸՆԿ.

Անուանք	Թոնոյ	Անուանք	Թոնոյ
Ապոլլօ	2,000	Լերոնտօ	4,500
Անճէլօ	3,000	Մարէնկօ	4,300
Արկօ	1,300	Մուրիլօ	2,500
Պասսանօ	3,500	Ովիդօ	2,000
Պորոտինօ	2,200	Ներօ	2,000
Պրավօ	2,000	Օթէլլօ	5,000
Պաֆֆալօ	2,600	Օռլանտօ	3,000
Գամիլօ	2,500	Օսլրիգօ	4,500
Գամէօ	2,100	Փօ	2,000
Գաթօ	2,000	Բասքէթ	1,200
Գոմօ	2,700	Բալերմօ	3,200
Տիտօ	2,500	Բանդէր	1,700
Տոմինօ	1,800	Ռիֆօ	2,800
Էլպօ	2,600	Րիալթօ	4,400
Էրոս	2,600	Ռինալտօ	3,200
Ֆալքօն	800	Ռօլլօ	3,000
Ֆլօրա	1,700	Ռոմանօ	5,500
Ֆլամինկօ	1,600	Ռոմէօ	3,500
Կալիլէօ	5,500	Սալէրնօ	4,000
Կիթանօ	2,200	Սաֆօ	2,000
Կօզօ	1,800	Սէլլիօ	2,000
Կրօտօ	2,200	Սորրենտօ	4,300
Համկօ		Թասսօ	1,200
Հէրօ	2,000	Թ. Ուիլսըն	3,000
Հիտալկօ	3,000	Թիկէր	1,300
Հիւմպէրթօ	1,200	Թօրէլլօ	2,800
Ճէսօ	2,300	Թրանքօ	3,600
Քէբրօ	2,000	Եարթա	1600
Քօֆօ	2,200	Զէնօ	3,000
Լէօ	2,000	Ջէրօ	41,0

Թոմէօ շոգենաւը, նաւապետ Մօւրօ, ընդհանուր վաճառքով Հըլլէն աստ հասած պարպած և յՕտեսա ուղեւորած է։

Մաքքէօ շոգենաւը, ընդհանուր վաճառքով Հըլլէն մեկնած է փետրուար 1ին, և 18ին աստ կ'սպասուի։

Ուղեւորներու համար ամեն դիւրութիւն

Աւելի մանրամասնութեանց համար դիմել առ ՖՐԷՏԷՐԻՔ ՀԻԼՏ ԵՒ ԸՆԿ.
Գործակալ
Թիւ 17-18, Քիւչիւք Միլլէթ խան Ղալաթիա

514

ՇՈԳԵՆԱՒԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹԻՒՆ

ՀԱՅԿԱԿԱՆ ԵՒ ՄԱՐՈՔԵԱՆ

Ն. ԲԱՔԷ ԵՒ ԸՆԿ.

Մարսէյլի և [illegible] միջև կանոնաւորապէս բանող

Մեծ շոգենաւն փետրուար 10 ին պիտի մեկնի ի Հավր։

Ուղղակի և արագ ուղեւորութիւն

Նաւուղէշքի, ուղեւորութեան և այլ տեղեկութեանց համար

Դիմել առ գործակատարն
ԹԻՆԻՐՈԹԷ ՐԸՊՈՒԼ
Թիւ 17-18 Քիւչիւք Միլլէթ
Մոմհանէ փողոց, Թիւ 141

514

Արտօնատէր Ս. ՏԱՄԱՏԵԱՆ

ՏՊԱԳՐՈՒԹԻՒՆ ԱՐԵՒԵԼՔ ԼՐԱԳՐՈՑ

ԱՐԵՒԵԼԵԱՆ ԵՐԿԱԹՈՒՂԻՔ

ԵՐԹԵՒԵԿՈՒԹԻՒՆ ԸՆԴ ՄԷՋ Կ. ՊՈԼՍՈՅ ԵՒ ՔԻՒՉԻՒՔ—ՉԷՔՄԷՃԷԻ

Սկսեալ ի 1 Հոկտեմբերի (Ն. Տ.) 1885, մինչեւ ցնոր տնօրինութիւն

Կ. ՊՈԼՍԷՆ ՔԻՒՉԻՒՔ—ՉԷՔՄԷՃԷ

ԹՈՒԱՀԱՄԱՐ ԿԱՌԱԽՄԲՈՑ

	0	4	2	6	8	10	12	14	16	18	20	22	24	26	28	30	32	34	36	38	40	60				
	Առաւօտ												Իրիկուն													
	ժ. վ.	ժ. վ.	ժ. վ.	ժ. վ.	ժ. վ.	ժ. վ.	ժ. վ.	ժ. վ.	ժ. վ.	ժ. վ.	ժ. վ.	ժ. վ.	ժ. վ.	ժ. վ.	ժ. վ.	ժ. վ.	ժ. վ.	ժ. վ.	ժ. վ.	ժ. վ.	ժ. վ.	ժ. վ.	ժ. վ.	ժ. վ.	ժ. վ.	ժ. վ.
Կ. Պոլիս	6 17	6 50	7 15	7 42	8 14	8 43	9 12	9 42	10 20	10 39	11 17	11 49	12 55	1 31	2 31	3 2	3 40	4 15	4 44	5 23	5 44	6 11	—	...	...	...
Գում—գաբու	6 28	7 ...	7 27	7 53	8 25	8 54	9 23	9 53	10 30	10 49	11 28	12 ...	1 6	1 42	2 41	3 13	3 51	4 26	4 55	5 34	5 54	6 22	...	...	...	...
Եէնի—գաբու	...	...	...	7 57	...	8 58	...	...	10 34	10 53	11 32	12 4	1 10	1 45	2 45	3 17	3 55	4 30	4 59	5 38	...	6 26	...	...	...	...
Տավուտ փաշա	...	...	...	8 ...	...	...	...	...	10 37	10 56	11 35	12 7	1 13	1 49	2 48	3 20	3 58	4 33	...	5 41	...	6 29	...	...	...	...
Սամաթիա	...	...	...	8 6	...	9 4	...	...	10 42	11 1	11 40	12 12	1 18	1 54	2 53	3 25	4 3	4 38	5 5	5 46	...	6 34	...	...	...	...
Եէշիլ—գիւղ	6 37	7 10	7 41	8 12	8 33	9 10	9 31	10 1	10 46	11 4	11 45	12 15	1 21	1 59	2 58	3 28	4 9	4 41	5 10	5 49	6 4	6 39	...	...	...	...
Մագրիգիւղ	6 48	7 23	8 ...	8 24	...	9 22	...	...	10 58	...	11 58	...	...	2 11	3 9	...	4 21	...	5 22	...	6 16	6 50	...	...	...	...
Այ Ստեֆանօ	...	7 33	8 14	8 34	...	9 32	...	...	11 8	...	12 9	...	...	2 21	...	...	4 31	...	5 32	...	6 28	...	...	...	...	...
Քիւչիւք Չէք	...	...	8 25	...	...	...	...	...	...	...	12 18	...	...	...	...	...	...	...	...	...	6 37	...	...	...	...	...
...	...	...	...	...	...	...	...	...	...	...	...	...	...	...	...	...	...	...	...	...	...	...	...	...	...	...

ՔԻՒՉԻՒՔ—ՉԷՔՄԷՃԷԷՆ Կ. ՊՈԼԻՍ

ԹՈՒԱՀԱՄԱՐ ԿԱՌԱԽՄԲՈՑ

	3	5	7	9	11	13	15	17	19	21	23	25	27	29	31	33	35	37	39	61	63	4				
	Առաւօտ												Իրիկուն													
	ժ. վ.	ժ. վ.	ժ. վ.	ժ. վ.	ժ. վ.	ժ. վ.	ժ. վ.	ժ. վ.	ժ. վ.	ժ. վ.	ժ. վ.	ժ. վ.	ժ. վ.	ժ. վ.	ժ. վ.	ժ. վ.	ժ. վ.	ժ. վ.	ժ. վ.	ժ. վ.	ժ. վ.	ժ. վ.	ժ. վ.	ժ. վ.	ժ. վ.	ժ. վ.
Քիւչիւք Չէք	...	6 34	...	...	...	...	...	...	...	...	...	...	1 24	...	...	...	...	...	...	...	...	6 38	...	...	...	...
Այ Ստեֆանօ	...	6 44	...	7 45	...	8 44	...	9 38	...	...	11 20	...	1 34	...	2 33	...	...	...	4 48	5 39	...	6 51	...	...	...	...
Մագրիգիւղ	6 ...	6 55	7 24	7 57	...	8 55	...	9 49	...	...	11 31	...	1 45	...	2 44	3 20	...	...	4 59	5 50	...	7 5	...	...	...	...
Եէշիլ—գիւղ	6 13	7 8	7 37	8 11	8 38	9 9	9 37	10 2	10 12	11 12	11 44	12 48	1 58	2 23	2 57	3 33	4 8	4 46	5 14	6 4	6 38	7 26	...	...	...	...
Սամաթիա	6 17	7 12	7 41	8 15	8 42	9 13	9 41	...	10 16	11 16	11 48	12 52	2 2	2 28	3 1	3 37	4 12	...	5 19	6 08	6 42	...	...	...	...	...
Տավուտ փաշա	6 22	7 17	7 46	...	8 47	...	9 46	...	10 21	11 21	11 53	12 57	...	2 33	3 6	3 42	4 17	...	5 24	6 13	6 47	...	...	...	...	...
Եէնի—գաբու	6 25	7 20	7 49	8 21	8 50	9 19	9 49	...	10 24	11 24	11 56	1 ...	2 8	2 36	3 9	3 45	4 20	...	5 28	6 16	6 50	...	...	...	...	...
Գում—գաբու	6 30	7 25	7 54	8 26	8 55	9 24	9 54	10 11	10 29	11 29	12 1	1 5	2 12	2 41	3 14	3 50	4 25	4 56	5 33	6 21	6 54	7 40	...	...	...	...
Կ. Պոլիս	6 39	7 34	8 3	8 35	9 4	9 33	10 3	10 20	10 38	11 38	12 10	1 14	2 21	2 50	3 23	3 59	4 34	5 5	5 42	6 30	7 3	7 50	...	...	...	...
...	...	...	...	...	...	...	...	...	...	...	...	...	...	...	...	...	...	...	...	...	...	...	...	...	...	...

Փոքր ծրարներն անխտիր կ'ընդունուին ամեն կառախմբի մէջ, իսկ մեծ ծրարք Պոլսէն Մաքրի գիւղ կամ աւելի հեռի կայարանաց միջեւ բանող կառախմբոց միջեւ. Ուրբաթ և Կիրակի օրերն Թիւ 20 կառախումբը կանգ պիտի առնու ի Ֆլօրիա։